


*«Երբ Յովսէփը իր եղբայրներուն մօտ
եկաւ, անոնք անոր վրայէն հանեցին
ծաղկապարդ պարմուճանը եւ զինք
հորի մը մէջ ներեցին»:*



Տերը կը պահպանէ Յովսէփը

Յակոբին ընտանիքը

Յակոբը Քանան վերադարձաւ եւ Քեբրոնի հիւսիսը գտնուող շրջանին մէջ բնակեցաւ, ուր անցեալին կ'ապրէին Աբրահամն ու Իսահակը: Ան խնդրեց որ այլեւս զինք Յակոբ չկոչեն, այլ՝ Իսրայէլ, որովհետեւ Աստուած զինք այդպէս կոչած էր: Աստուած 12 զաւակներ տուաւ Յակոբին: Յովսէփն ու Բենիամինը ամենէն փոքր տղաքն էին, եւ Յակոբ շատ կը սիրէր զանոնք: Անոնք Ռաքէլի ծնած վերջին զաւակներն էին: Ան մեռաւ Բենիամինի ծնունդէն ետք: Իր որդիին վերադարձէն կարճ ժամանակ ետք, Իսահակ մահացաւ 180 տարեկանին, եւ Յակոբն ու Եսաւը թաղեցին զայն:

Յովսէփի եղբայրներուն դաւադրութիւնը

Իսրայէլի բոլոր զաւակները հովիւ էին: Մեծ որդիները հօտը արածելու կը տանէին տունէն հեռու վայրեր, ուր կարելի էր ջուր եւ դալար մարգագետիններ գտնել անոնց համար: Իսրայէլ շատ մտաւոր էր իր զաւակներով, ուստի Յովսէփը դրկեց անոնց, յայտնելով թէ շատ կարօտցած է զիրենք: Յուրտէն պաշտպանելու համար, ան Յովսէփին գեղեցիկ վերարկու մը հագցուց: Յովսէփի եղբայրները կը նախաձեռնէին, որ հայրը իրենցմէ աւելի կը սիրէր Յովսէփին եւ միշտ լաւ նուէրներ կու տար անոր: Յովսէփը երազ մը տեսաւ, ուր ինքը իբրեւ թէ աւելի մեծ է իր եղբայրներէն, եւ միամտութեամբ այս երազը իր եղբայրներուն պատմեց: Ամէն անգամ երբ կը մօտենար իրենց բնակած վայրին, կը լսէր եղբայրներուն խօսակցութիւնը, որոնք իրարու կ'ըսէին. «Ահաւասիկ երազատեսը կու գայ, սպաննե՞նք զինք»: Եղբայրները համաձայնեցան որ զինք ջրհորի մը մէջ նետեն եւ իրեն հօրը լուր դրկեն ըսելով որ վայրի գազան մը վրան յարձակած ու բզբտած է զայն: Մեծ եղբայրնին՝ Ռուբէնը, Յովսէփի կեանքը փրկելու համար ըսաւ, թէ մեղք է սպանութիւն ընելը ու արիւն թափելը, մերկացուցին եւ հորին մէջ նետեցին: Ապա ճաշի նըստան, ականջ չտալով անոր օգնութեան կանչերուն: Զիչ ետք տեսան որ կարաւան մը կ'անցնի, որ ապրանք բեռնուցած դէպի Եգիպտոս կ'երթար: Եղբայրներէն մէկը՝ Յուդան ըսաւ. «Ի՞նչ շահ պիտի ունենանք մեր եղբայրը սպաննելով ու անոր արիւնը պահելով մեր հօրմէն: Եկէ՛ք զայն իբրեւ ծառայ ծախենք եւ այդպէսով ազատինք իրմէ»: Ու անոնք դուրս բերին Յովսէփը հորէն եւ 20 արծաթի ծախեցին: Նոյն ձեւով ալ ուրիշ Յուդա մը հետագային, քանի մը արծաթով պիտի մատնէր Յիսուս Քրիստոսը: Վաճառականները Յովսէփը առին ու իրենք ալ իրենց կարգին Եգիպտոսի մէջ ծախեցին զայն: Եղբայրները այժ մը մոռեցին, անոր արիւնը Յովսէփի

վերարկուին վրայ քսեցին եւ Յակոբին ցոյց տալով ըսին թէ՝ անապատին մէջ գտած են ատիկա: Յակոբը յուսահատօրէն լացաւ իր զաւակին համար, եւ ոչ մէկ բան զինք կը մխիթարէր այլեւս:

Յովսէփը ծառայ եղաւ Պետափրեսի տան մէջ

Յովսէփը իբր ծառայ ծախեցին Պետափրեսին, որ փարաւոնին դահճապետն էր: Ան շատ հաւնեցաւ Յովսէփը եւ իր տան ամբողջ գործերը անոր յանձնեց, որովհետեւ զգաց, որ Աստուած կը սիրէ ու կը պահպանէ զայն: Նոյն ատեն, Պետափրեսին կինը սիրահարուեցաւ Յովսէփին, սակայն տեսնելով որ ան չի սիրէր զինք, սկսաւ զրպարտել ըսելով թէ զինք անպատուելու փորձ ըրած է: Այս լսելով, Պետափրեսը բանտ նետել տուաւ Յովսէփը:

Բանտին մէջ

Յովսէփը բանտին մէջ հանդիպեցաւ փարաւոնին գինեպանին ու հացագործին, որոնք յանցանքներ գործած էին իրենց տիրոջ նկատմամբ: Յովսէփը բանտին մէջ անոնց ծառայելու պարտականութիւն ունէր: Առաւօտուն անոնց մօտ երթալով, Յովսէփ շատ յուսահատ վիճակի մէջ տեսաւ զիրենք: Անոնք միշտ երազներ կը տեսնէին ու չէին կրնար հասկնալ անոնց իմաստը: Յովսէփ սկսաւ մեկնաբանել անոնց երազները, ըսելով որ երեք օր յետոյ զինեպանը կրկին իր գործին պիտի վերադառնայ փարաւոնին մօտ, իսկ հացագործը պիտի օլխատուի: Ճիշդ նոյն ձեւով ալ եղաւ: Յովսէփը խնդրեց զինեպանէն, որ փարաւոնին պատմէ իր ըրած գուշակութիւններուն մասին, սակայն զինեպանը բանտէն դուրս գալէ ետք, ինչպէս յաճախ կ'ընեն ուրախ մարդիկ, մոռցաւ Յովսէփին խնդրանքը:

Յովսէփ կը մեկնաբանէ փարաւոնին երազները

Երկու տարի յետոյ, փարաւոնը ի՞նչ երազներ տեսաւ, եւ չկար մէկը որ հասկնար ու մեկնաբանէր զանոնք: Իր երագին մէջ եօթը գեր կովեր կեցած էին Նեղոս գետի ափին եւ խոտ կ'ուտէին: Յետոյ, գետէն դուրս կ'ելլեն ուրիշ եօթը կովեր, աւելի նիհար ու շատ տգեղ երեւոյթով, ու կ'ուտեն այս գեր եզները: Ուրիշ երագ մըն ալ տեսաւ ան. եօթը պարապ հասկեր եօթը գեր ու հասուն հասկեր կը կլլեն: Եգիպտացի իմաստունները չկրցան մեկնաբանել այդ երազները: Այն ատեն զինեպանը յիշեց Յովսէփը, որ մութ բանտին մէջ էր երկու տարիներէ ի վեր, ու փարաւոնին պատմեց անոր մասին, ըսելով որ ան կրնայ մեկնաբանել այս երազները: Եւ բանտէն հանելով փարաւոնին մօտ տարին Յովսէփը: Փարա-

ւոնը հրամայեց որ իր երագները մեկնէ իրեն: Յովսէփ ըսաւ անոր. «Ես չեմ կրնար քու երագներդ մեկնաբանել, միայն Աստուած կրնայ ընել այդ»: Եւ Յովսէփ խնդրեց Աստուծոյ, ու Աստուած օգնեց իրեն մեկնաբանելու համար փարաւոնին երագը: Անոր տուած մեկնաբանութեան համաձայն, գեր կովերը եւ եօթը գեր հասկերը առատ բերքի եօթը տարիներ են, իսկ եօթը միհար ու տգեղ կովերը եւ եօթը պարապ հասկերը՝ երաշտի նշաններ են: Այսինքն՝ եօթը տարիներ ետք սով պիտի ըլլար:

Փարաւոնին տան կառավարիչ

Յովսէփ խորհուրդ տուաւ փարաւոնին, որ խելացի ու կազմակերպող մարդիկ ընտրէ, որպէսզի օգնեն թագաւորին, իր երկիրը ու հողը կառավարելու աշխատանքին մէջ: Յովսէփ խորհուրդ տուաւ նաեւ, գործակատար մարդիկ նշանակել, որոնք յառաջիկայ եօթը տարիներու ընթացքին Եգիպտոսի առատ բերքին մէկ հինգերորդ մասը իբրեւ պետական տուրք գանձեն: Ան առաջարկեց որ այդ գանձուած բերքը փարաւոնին տրամադրութեան տակ պէտք է դրուէր, իսկ մնացեալը քաղաքներուն մէջ պէտք է պահուէր, երաշտի տարիներ-

րուն օգտագործելու համար, որպէսզի ժողովուրդը սովի չմատնուէր: Փարաւոնը Յովսէփին ըսաւ. «Քեզմէ աւելի իմաստուն մէկը չկայ: Դուն պիտի կառավարես իմ տունս, ու բոլորը քեզի պիտի ենթարկուին: Միայն ես քեզմէ մեծ կ'ըլլամ այս տան մէջ»:

Յովսէփ երեսուն տարեկան էր, երբ փարաւոնին տան կառավարիչ դարձաւ:

Երագը իրականացաւ


Յովսէփ պարտաւորուեցաւ ամբողջ Եգիպտոսի մէջ շրջագայիլ: Եօթը տարիներու ընթացքին ան ամբարեց այնքան՝ ինչքան կարելի էր: Բաւականաչափ հացահատիկ ալ հաւաքուած էր. ծովու աւազին չափ, եւ ալ չէր հաշուեր ցորենի պարկերը:

Եօթը տարիներ անցան: Ամբողջ աշխարհի վրայ սով եղաւ: Յովսէփի շտեմարանները լեցուն էին ցորենով: Երբ Եգիպտոսի մէջ հացահատիկը վերջացաւ, մարդիկ սկսան փարաւոնին մօտ երթալ, ան ալ կառավարիչին մօտ կը դրկէր զիրենք: Ու Յովսէփ բոլոր շտեմարանները բացաւ ու սկսաւ հաց ծախել: Չանազան երկիրներէն մարդիկ Եգիպտոս կու գային հաց գնելու համար Յովսէփին:

Ես ուրիշներուն կրնամ օգնել

Յովսէփ իմաստուն եւ հեռատես եղաւ ու օգնեց ուրիշներուն: Հարցուցէ՛ք ինչուե՞սալ հարցունները: Յովսէփ ինչպէ՞ս կ'օգնէր ուրիշներուն: Կառավարիչ ըլլալէն ետք ինչպէ՞ս շարունակեց օգնել ուրիշներուն: Խաղցէ՛ք «Ես ուրիշներուն կրնամ օգնել» խաղը:

Այս էջին վրայ կ'լորակ մը կը տեսնէք: Պէտք ունի՞ք սուր մատիտի մը եւ թուղթի ունելիի մը: Սուր մատիտը կ'լորին մէջտեղ եւ ունելին աւոր տակ, այնպէս մը որ ունելին ազատ դառնայ ու նկարներէն մէկուն վրայ կենայ: Այն նկարին վրայ որ կենայ ունելին, դուք կը պատմէք թէ ինչո՞վ եւ ինչպէ՞ս կրնա՞ք օգնել ուրիշներուն:



Կը պատրաստուինք Ս. Ծննդեան տօնին

Նախապատրաստութիւն Ս. Ծննդեան տօնին

Ս. Ծննդեան տօնին կը պատրաստուինք: Օրացոյցին նայինք: Արդէն մօտեցած է Յիսուսի Ծննդեան տօնը, աշխարհի ամենէն ուրախ տօներէն մէկը, զոր ամբողջ քրիստոնեայ աշխարհը կը տօնէ: Թերեւս ալ ամենէն աւելի մանուկներուն յարմար տօնն է Յիսուս Մանուկին Ծննդեան տօնը, որ ամբողջ աշխարհի Փրկիչը դարձաւ: Եկեղեցին կ'ուզէ որ մենք նախապատրաստուինք այս տօնին: Դեկտեմբերի վերջաւորութեան կը սկսի Ս. Ծննդեան պահեցողութիւնը:

Կեանքը Աստուծոյ հետ

Կը յիշէ՞ք մեր առաջին դասերուն պատմութիւնները: Մենք հոն սորվեցանք, որ Աստուած աշխարհը ստեղծեց, որովհետեւ մարդիկը շատ կը սիրէր: Ան մարդ եւ կին ստեղծեց եւ պատուիրեց հոգ տանիլ իր պարտեզին: Սակայն Ադամն ու Եւան մտիկ չըրին Աստուծոյ, եւ Արարիչը ստիպուեցաւ վճարել զանոնք դրախտէն: Յետոյ մարդիկ սկսան մոռնալ զԱստուած եւ մեղքերով ապականուեցաւ իրենց կեանքը: Բայց Աստուած զիրենք չլքեց: Չարը թաղելով ջրհեղեղի ջրերը ու տակ, Ան փրկեց այն բոլորը որոնք քարի էին ու լաւ: Այսպէս, Աստուած փրկեց արդար Նոյը եւ անոր ամբողջ ընտանիքը: Որովհետեւ բնաւ չէր մոռնար զԱստուած եւ միշտ կը ջանար Աստուծոյ կամքին համաձայն, ու Անոր հնազանդ ապրիլ: Անկէ քանի մը սե-

րունդ յետոյ, Աստուած Աբրահամին յայտնուեցաւ եւ խոստացաւ զայն զգգերու նախահայր դարձնել, եւ ան միշտ յիշեց զԱստուած ու հաւատարիմ եղաւ Անոր նկատմամբ: Աստուծոյ կամքին հնազանդելով, Աբրահամին զաւակ պարգեւեց, զոր կոչեցին Իսահակ: Իսահակը երկու զաւակներ ունեցաւ Յակոբ եւ Եսաւ, եւ անոնց քննութիւնը ջնջուեցաւ: Իսկ Յակոբը 12 զաւակներ ունեցաւ, անոնց շարքին նաեւ Յովսէփը՝ ամենէն փոքրը: Հակառակ անոր որ եղբայրները կը նախանձէին իրեն ու նոյնիսկ կը խորհէին սպաննել զայն, սակայն հետագային Յովսէփը, Աստուծոյ նախախնամութեամբ, իր եղբայրներն ու ամբողջ ընտանիքը փրկեց սովէն:

Փրկիչ մը տալու խոստումը

Ամբողջ այս պատմութիւնը մենք կը գտնենք Հին Կտակարանին մէջ: Յաջորդ դասերուն մէջ մենք պիտի տեսնենք Աստուծոյ ընտրեալ ժողովուրդին հետագայ փորձութիւնները: Հին Կտակարանին մէջ Աստուած կը խոստանայ Մեսիան զրկել, որ մարդկութիւնը պիտի փրկէ մահէն եւ մեղքէն: Հետզհետէ մենք կը սկսինք հասկնալ թէ ի՞նչ բանի մասին կը խօսուէր Հին Կտակարանին մէջ, եւ թէ՛ պիտի պատահէր անխուսափելի՝ Փրկիչը պիտի գար: Ծննդեան եւ Աստուածայայտնութեան պահքի ընթացքին մենք միշտ պէտք է յիշենք Աստուծոյ Որդիին զալուստը, եւ պատրաստ պէտք է ըլլանք ընդունիլ զԱյն մեր հոգիներուն մէջ:




ԸՆՏԱՆԵԿԱՆ միջավայրին մէջ

Ծննդեան տօնը հիանալի մթնոլորտ մը կը ստեղծէ ընտանեկան միջավայրին ջերմութիւնը ըմբոշխնելու համար: Մարդիկ երբ կը պատրաստուին Ծննդեան տօներուն, կ'աղօթեն, եկեղեցի կ'երթան, Սուրբ Գիրք կը կարդան, մարդոց հետ իրենց փոխ-յարաբերութիւնները աւելի ջերմ կը դարձնեն, իրարու աւելի կը մտերմանան եւ այդպիսով աւելի հարուստ կը զգան: Յաջորդ շաբաթներուն, այս էջերուն մէջ շատ միւթերու պիտի հանդիպիք, որոնք ընտանեկան կեանքի կը վերաբերին: Զանազէք իւրաքանչիւր շաբթուան մէջ կարճ ժամանակ մը գտնել, որպէսզի միասնաբար պատրաստուիք դիմաւորելու Քրիստոսի ծննդեան եւ աստուածայայտնութեան տօնը: Օրինակ, միասնաբար նամակ մը կըրնաք գրել: Զեզմէ իւրաքանչիւրը այդ նամակին մէջ քա-

նի մը տող կը գրէ, ըսելով թէ ի՞նչ բան կարեւոր եղած էր իրեն համար անցնող տարուան ընթացքին: Այդ նամակին մէջ կրնան տեղ գտնել ուրախ եւ տխուր դէպքեր, ինչպէս նաեւ հոն կրնան գրուիլ Ս. Ծնունդէն մեր ունեցած ակնկալութիւնները: Նամակը կարելի է դրկել մեր ընկերներուն, ազգականներուն: Կարելի է նաեւ զայն պահել ձեզի, որպէսզի յաջորդ տարի կարենանք անգամ մը եւս կարդալ զայն: Զայն կարելի է պահել ձեր ընտանեկան արխիւին մէջ, եւ միացնել այդ տարի նկարուած ձեր լուսանկարներուն: Յաջորդ տարի նամակ մը եւս գրելով, ձեր ընտանիքը հիմը դրած կ'ըլլայ Ս. Ծննդեան կապուած ընտանեկան գեղեցիկ աւանդութեան մը:

Ձեռային աշխատանքով ինչե՞ր կրնանք պատրաստել Ծննդեան պահքի օրերուն



խաւաքարտի կտոր մը ամէք ու անկէ կ'որակ կտրեցէք, եւ կամ՝ աստղի ձեւով՝ վեց սուր անկիւններով կտրեցէք: Վեց թելերուն վրայ ծակեր բացէք, եւ ծակ մըն ալ կեդրոնը, ուր մոմեր պիտի դնէք: Փայլուն

թուղթերով զարդարեցէք ձեր կտրած խաւաքարտը, տօնածառի միւղեր դրէք վրան ու ներկեցէք, գեղեցկացուցէք: Յետոյ մոմեր շարեցէք սուր անկիւններուն վրայ ու կեդրոնը: Ծննդեան պահքի իւրաքանչիւր օր, մէկ մոմ վառեցէք եւ կարդացէք այստեղ գրուած տողերը: Լաւ կ'ըլլայ որ ասիկա ամէն օր ընէք:



Ուրախացի՛ր սրբուհի գաբրիէլի աւետեօքն. որ քարոզեացն ընդդալուստ արքային տեառն ի յերկնից:

Ողջոյն ընդ քեզ Մարիամ, ի քեզ սուրբ Հոգին եկեացէ. եւ զօրութիւն բարձրելոյն ի վերայ քո Հովանասցի:

Որ ծնանելոցն է ի քէն խորայէլի առաջնորդ. եւ ընդհանուր քարոզի աստուած Հզօր անմահ բանն:

Ուրախ լիբ բերկրեալ ամենասուրբ կոյս. որ ծնար աշխարհի զարդարութեան արեգակն. որ լուսաւորեաց զազգս որդւոց մարդկան



(Կանոն Աստուածայայտնութեան նրազալոյցի):

Առաքեալ եւ Աւետարանիչ Սուրբ Մատթէոսը

Եկեղեցւոյ հնագոյն վկայութեանց համաձայն, Նոր Կտակարանի առաջին գիրքը Մատթէոս առաքեալն ու աւետարանիչը ինք գրած է: Հաւանաբար անոր Աւետարանի բնագիրը արամեերէն՝ Պաղեստինի ժողովուրդին խօսակցական լեզուով եղած ըլլայ: Արամեերէնը հին լեզու մըն է եւ կը պատկանի Խառանի շրջանի ժողովուրդներու լեզուներու ընտանիքին: Այդ երկիրներուն մէջ կ'ապրէր Աբրահամի եղբայրը՝ Նաքորը, անոր որդին Լաբանը եւ Իսահակին որդին՝ Յակոբը: Մատթէոսը մաքսաւոր մըն էր, երբ Յիսուս զինք կանչեց եւ ըսաւ. «Ինձի հետեւիր»: Մատթէոս ոտքի ելաւ, ձգեց իր բոլոր գործերը եւ հետեւեցաւ Յիսուսի (Մտ 9.9): Նոյն պատմութիւնը մենք կը կարդանք նաեւ Մարկոսի Աւետարանին մէջ, միակ տարբերութեամբ, որ Մատթէոսը հոն կոչուած է Ալփիէոսի որդի Ղեւի: Այդ ժամանակներուն ընդունուած սովորութիւն էր մարդոց երկու անուն տալը (Սիմոն-Պետրոս): Սուրբ Ղուկասը Մատթէոսը նաեւ Ղեւի կը կոչէ, եւ կ'ըսէ, թէ օր մը ան իր տունը ճաշի հրաւիրեց Յիսուսը, ուր ներկայ էին նաեւ շատ մը մաքսաւորներ եւ այլ հիւրեր: «Կարգ մը մարդիկ սկսան դժգոհիլ եւ անոր աշակերտներուն հարցնել, թէ ինչո՞ւ համար իրենք մաքսաւորներուն եւ մեղաւորներուն հետ սեղան կը նստին» (Ղկ 5.27-29): Մատթէոսի անունը կը յիշուի նաեւ այն աշակերտներուն խումբին մէջ, որոնց Յիսուս իշխանութիւն տուաւ. «...պիղծ դեւեր հանելու եւ ամեն ցաւ ու հիւանդութիւն բժշկելու» (Մտ 10.1): Ան թելադրեց դրամ չառնել քարոզութեան համար, այլ միայն քիչ մը ուտելիք՝ անօթութիւնը կշտացնելու հա-



Առաքեալ եւ Աւետարանիչ Ս. Մատթէոսը

մար. «Ձրի առիք, ծրի տուէք»: Մատթէոս իր քարոզութիւնը ուղղեց հրեաներուն եւ Յիսուսը Քրիստոս կը կոչէր, այսինքն՝ օծեալ, Մեսիա, Ղաւիթի որդի, որ կ'առաջնորդէ դէպի երկինքի արքայութիւն:

Յիսուս Քրիստոսի խօսքերը երկնային Թագաւորութեան մասին Ըստ Մատթէոսի Աւետարանին

Մատթէոսի Աւետարանէն գտնէք հետեւեալ հատուածները:
Հոն գրուածը ձեր բառերով վերարտադրեցէք, ընդգծելով կարեւոր գաղափարները:

Մտ 4.17

Մտ 5.3

Մտ 5.48

Մտ 18.4 (19.14)

*Ես ձեր եղբայրը՝ Յովսէփն եմ...
Աստուած ձեզ փրկելու համար պիտի հոս յրկեց*



Յովսէփի իր եղբայրները կը փրկէ

Յովսէփի եղբայրները եգիպտոս եկան

Քանանի մէջ, ուր կ'ապրէին Յովսէփի եղբայրները եւ հայրը՝ Յակոբ, սաստիկ երաշտ եւ սով սկսաւ: Յակոբ իր որդիները եգիպտոս դրկեց, որպէսզի հաց գնեն: Ան իր մօտ պահեց միայն Բենիամինը:

Յովսէփ փարաւունին գործերուն կառավարիչն էր եւ ինք անձնապէս կը տնօրինէր հացի վաճառքին աշխատանքները: Եւ ահա իր հարազատ եղբայրները եկան իր մօտ եւ խոնարհութիւն ըրին: Յովսէփ շուտով ճանչցաւ զանոնք, բայց յայտնի չըրաւ: Շատ խիստ նայեցաւ իր եղբայրներուն եւ ըսաւ. «Ուրկէ՞ էք դուք»: «Քանանէն», պաշտասխանեցին անոնք, առանց կարենալու իրենց աչքերը վեր բարձրացնել: «Դուք լրտեսներ էք եւ եկած էք մեր երկիրը լրտեսելու», ըսաւ Յովսէփ: Սակայն եղբայրները վստահեցուցին, որ եկած են հաց գնելու եւ թէ իրենք ազնիւ ու բարի մարդիկ են, ու խոնարհ ծառաներ: Անոնք պատմեցին նաեւ որ իրենք 12 եղբայրներ էին, մէկը մեռած, իսկ փոքրը իր հօր մօտ մնացած է:

Յովսէփ ազատ կ'արձակէ իր եղբայրները

Յովսէփ հրամայեց որ մութ բանտ մը նետեն զանոնք եւ ըսաւ. «Ձեզմէ մէկը թող երթայ ու ձեր փոքր եղբայրը հոս բերէ»: Ան շատ կը փափաքէր Բենիամինը տեսնել: Սակայն երեք օր ետք Յովսէփ բոլորն ալ ազատ արձակեց, բացի Շմաւոնէն, զայն պատանդ պահելով իր մօտ, մինչեւ որ եղբայրները երթան ու իրենց փոքր եղբայրը բերեն: Եղբայրները շփոթի մատնուեցան: Անոնք շատ լաւ գիտէին, որ իրենց հայրը շատ պիտի նեղուի եթէ Բենիամինին բան մը պատահի, սակայն ուրիշ ելք չունէին: Յովսէփ հրամայեց որ իր եղբայրներուն պարկերուն մէջ հաց լեցնեն, իսկ անոնց վճարած արծաթէ դրամներն ալ պարկերուն մէջ դնել տալով ճամբեց: Եղբայրները իրենց պարկերը բեռնուցին էշերուն վրայ ու ճամբայ ինկան դէպի տուն:

Յակոբ շատ կ'ազդուի

Եղբայրները տուն վերադարձան, թամբերէն վար առին իրենց պարկերը եւ հացերուն մէջէն իրենց արծաթէ դրամները գտնելով՝ շատ զարմացան: Անոնք նոյնիսկ վախցան, մտածելով որ նորէն եգիպտոս երթալ պէտք պիտի ըլլայ դրամը վերադարձնելու. գողութեան մէջ մեղադրուելու այս «փաստը» վախազդու էր: Սակայն անօթութիւնը երթալով աւելի կը տարածուէր եւ իրենց պաշարները շուտով վերջացան: Շփոթի մատնուած, եղբայրները խոստովանեցան իրենց հօր, ըսելով որ փարաւունին գործավարը հրամայած է որ իրենց Բենիամին եղբայրն ալ հետերնին բերեն: Յակոբը շատ ազդուեցաւ. «Դուք զիս զրկեցիք իմ երկու զաւակներէս՝ Յովսէփէն ու Շմաւոնէն, իսկ հիմա ալ Բենիամինը պիտի տանիք»:

Յովսէփ կը դիմաւորէ Բենիամինը

Եգիպտոս հասնելով, եղբայրները իրենց հետ միասին Յովսէփի տունը տարին Բենիամինը, եւ Յովսէփի տան կառավարիչին ըսին. «Մենք գող չենք: Մենք ալ չենք զիտեր թէ ինչպէ՞ս մեր պարկերուն դրուած են մեր վճարած արծաթէ դրամները: Մենք պատրաստ ենք վերադարձնելու զանոնք»: Կառավարիչը հանդարտեցուց զանոնք ըսելով. «Ձեր ու ձեր հայրերուն Աստուածը ի՞նք այդ դրամը ձեր պարկերուն մէջ դրած է»: Ան զիրենք առաջնորդեց Յովսէփին տունը: Յովսէփ դուրս ելաւ զիրենք դիմաւորելու, եւ եղբայրները մինչեւ գետին խոնարհելով նուէրներ տուին անոր: Բենիամինը տեսնելով, Յովսէփ շատ յուզուեցաւ եւ կ'ուզէր լալ, սակայն կամաց-կամաց հանդարտեցաւ: Յետոյ գնաց լուացուեցաւ, դէմքը սրբեց ու դուրս ելլելով բոլորը սեղանի մը շուրջ նստեցուց: Յովսէփը շատ սիրալիկ հիւրասիրութիւն ըրաւ եղբայրներուն, եւ մասնաւոր հոգածութիւն ցոյց տուաւ Բենիամինին:

Յովսէփ ինքզինք կը յայտնէ

Յաջորդ առաւօտ, եղբայրները ճամբու դնելով, հրամայեց որ անոնց պարկերը ուտելիքով լեցնեն, իւրաքանչիւրին տուած արծաթ դրամն ալ մէջը դնելով, իսկ Բենիամինին պարկին մէջ դնել տուաւ արծաթէ զաւաթ մը: Երբ անոնք ճամբայ ելան, Յովսէփը անոնց ետեւէն մարդ դրկեց, որ հասաւ անոնց եւ ըսաւ. «Ինչո՞ւ համար լաւութեան դիմաց վատութիւն կ'ընէք դուք»: Եւ անոնց պարկերը քննեցին ու զիրենք ետ բերին Եգիպտոս: Եղբայրները ի գուր իրենց կուրծքը կը կոծէին եւ զԱստուած օգնութեան կը կանչէին: Յովսէփ ըսաւ. «Անոր մօտէն որ իմ արծաթէ զաւաթս կ'ելլէ, ան իմ ծառաս պիտի դառնայ, իսկ մնացեալներդ անպարտ կը համարուիք»: Եւ եղբայրները ըսին, աւելի լաւ է որ մենք բոլորս քու ծառաներդ դառնանք, որովհետեւ եթէ մեր փոքր եղբայրը չվերադառնայ, մեր հայրը իր վիշտէն կը մեռնի»: Այս լսելով, Յովսէփ ալ չդիմացաւ ու սկսաւ լալ եւ ըսաւ. «Ես ձեր եղբայրն եմ՝ Յովսէփը, զոր դուք ծախեցիք վաճառականներու, որպէսզի Եգիպտոս տանին: Բայց հիմա մի՛ նեղուիք, որ զիս այդպէս ծախեցիք, որովհետեւ Աստուած զիս հոս ձեզմէ առաջ դրկեց, ձեզ փրկելու համար»: Այս ըսելով, ան ինկաւ Բենիամինին վիզը ու սկսաւ լալ: Ապա Յովսէփ իր բոլոր եղբայրներն ալ համբուրեց:

Յակոբը այս բոլորը լսելով, նախ չկրցաւ հաւատալ իր զաւակներուն ըսածին, բայց ոյծ եկաւ վրան: Ան շատ ուրախացաւ ու ըսաւ. «Դեռ ողջ է իմ որդիս՝ Յովսէփը, երթամ ու տեսնեմ զինք, քանի որ դեռ ողջ եմ»: Դուրսը կառքերը զինք կը սպասէին: Այդ կառքերը նստելով, ան իր զաւակներն ու թոռները, աղջիկներն ու թոռնուհիները իր հետ առած, ամբողջ գերդաստանով Եգիպտոս գնաց:

«Խաղաղ Տուն»-ին գաղտնիքը


«Խաղաղ ապրիլ» կը նշանակէ իրար հասկացողութեան եւ համաձայնութեան մթնոլորտի մը մէջ ապրիլ, առանց նախանձի ու թշնամութեան: Երբեմն մեծ ճիգ կը պահանջուի ներողութիւն խնդրելու կամ ուրիշի մը ներելու համար, որովհետեւ մեզ շատ կը տանջեն նախապէս պատահած անախորժ դէպքերը:

Յովսէփ ներեց իր եղբայրներուն, որոնք այնքան վատ վարուեցան իր հետ, եւ օգնեց անոնց, երբ նեղութեան մէջ էին: Մտածեցէք, թէ դուք ալ կրնա՞ք այդպէս համերաշխութեամբ ապրիլ տան, դպրոցին թէ բակին մէջ:

Կարդացէք վարի տուփիկներուն մէջ դրուած Սուրբ Գրային մէջբերումները եւ ձեր խօսած լեզուով բացատրեցէ՛ք, թէ անոնք ի՞նչ կ'ուզեն շեշտել: Մանուկները մկրատով թող կտրտեն առանձին-առանձին եւ իրարու հետ կապ ունեցողները քով-քովի թող դնեն: Այս աշխատանքը ըրած պահուն կրկնենք զանոնք, այն կարգով որ հոս դրուած են:

- Այս տողերէն որո՞նք կրնան օգնել մեզի, պատմելու Յովսէփին ու իր եղբայրներուն պատմութիւնը:
- Ասոնք ինչպէ՞ս կրնան օգտակար ըլլալ ձեզի:
- Ասոնցմէ ամենէն դժուարը ո՞ր մէկն է ըստ ձեզի:

«Իմ խաղաղութիւնս կու տամ ձեզի» (Յհ 14.27)



Եկեղեցական տօներ եւ Սուրբ Աստուածածնի տաճար ընծայումը

Յովակիմն ու Աննան իրենց աղջիկը Աստուծոյ կ'ընծայեն



Աստուած զաւակ մը պարգեւեց Յովակիմին ու Աննային եւ անոնք խոստացան մանուկը Աստուծոյ ընծայել: Երբ Սուրբ Կոյսը երեք տարեկան եղաւ, տաճար տարին զայն: Դպիրները, մոմեր ձեռքերնին, դիմաւորեցին մանուկն ու անոր ծնողքը եւ առաջնորդեցին զանոնք տաճարին ներքին գաւիթը, ուր Ջաքարիա Քահանայապետը զիրենք դիմաւորեց:

Այդ օրերուն Երուսաղէմի տաճարին մէջ կը գտնուէր Տապանակ Ուխտին, զոր Մովսէս ու իր ժողովուրդը 40 տարի անապատին մէջ իրենց հետ տարած էին: Այդ տապանակին քարէ տախտակներուն վրայ Աստուծոյ օրէնքը գրուած էր՝ Տասնաբանեայ Պատուիրանը, զոր Աստուած իր ժողովուրդին տուած էր: Ան տաճարին ամենէն սրբազան բաժնին՝ Սրբութիւն Սրբոցին մէջ կը պահուէր: Միայն քահանայապետը իրաւունք ուներ

տարին մէկ անգամ այդտեղ մտնելու ու իր եւ իր ժողովուրդին մեղքերուն համար զոհ մատուցանելու: Բայց այդ օր հրաշք տեղի ունեցաւ: Փոքրիկ աղջնակը յանկարծ ինքնիդեն սկսաւ բարձրանալ դէպի Սրբութիւն Սրբոց տանող բարձր աստիճանները: Աստուած ընդունեց Մարիամը եւ մարդիկ իր այդ արարքին մէջ Աստուծոյ նախախնամութիւնը տեսան: Մարիամ մնաց տաճարին մէջ, ուր մեծցաւ եւ Սուրբ Գիրքը ուսումնասիրեց, աշխատեցաւ, աղօթեց, մինչեւ որ Աստուծոյ կողմէ առաքելութեան կանչուեցաւ:

Հանդիսաւոր տօներու յատուկ շարականներուն մէջ կը փառաբանենք Ս. Կոյսը իբրեւ «Սուրբ Տաճար Փրկչին», որովհետեւ ան իր որովայնին մէջ մեր Փրկիչը կրած է:

Աւետարանին հեղինակները (Գ. Մաս)

Սուրբ Ղուկաս Առաքեալ եւ Աւետարանիչ

Երրորդ Աւետարանին հեղինակը Սուրբ Ղուկասն է՝ առաքեալ եւ աւետարանիչ։ Ան ապրած է յունարէն խօսող միջավայրի մէջ եւ ինք ալ ազգութեամբ յոյն էր։ Ան իր Աւետարանը գրած է անոնց համար որոնք չէին ճանչնար Յիսուս Բրիստոսը, սակայն լսած էին անոր կեանքին եւ ուսուցումներուն մասին։ Ղուկաս, Պօղոս առաքեալի ամենէն մտերիմ գործակիցն էր։

Իր Աւետարանին սկիզբը ան կը գրէ. «Շատերը սկսան գրել պատահած դէպքերուն պատմութիւնը, ինչպէս որ մեզի ալ պատմեցին անոնք՝ որոնք ականատես եւ սպասաւորներ եղան. ես ալ որ սկիզբէն իսկ մօտէն կը հետեւէի ամեն բանի, ուզեցի մանրամասնօրէն գրել զանոնք» (Ղկ 1.1-3)։ Ապա կը բացատրէ, թէ Աւետարանը գրած է իր լսածները տրամաբանական հերթականութեամբ շարադրելով, այսինքն Աւետարանիչը Յիսուս Բրիստոսի կեանքին ու հոգեւոր ծառայութեան պատմութիւնը կը ներկայացնէ տրամաբանական շարադրութեամբ, որպէսզի մարդիկ կարենան դիտութեամբ «ճանչնալ հաւատքի այն ամուր հիմը, զոր կը դաւանին»։

Աւետարանին շարունակութիւնը կը համարուի Ղուկասի գրած «Գործք Առաքելոց» գիրքը։ Այնտեղ կը պատմէ այն դէպքերուն մասին, որոնք Յիսուսի մահուընէ, յարութենէն ու համբարձումէն ետքը պատահեցան։ Առաքեալը կը նկարագրէ եկեղեցւոյ կազմակերպումը, առաքելական ծառայութեան քաջագործութիւնները եւ կը վկայէ, թէ՝ Յիսուսի աշակերտները ինչպէս ամբողջ աշխարհի մէջ բարի լուրը տարածեցին։ Ղուկասի փափաքը այն է, որ ոչ միայն Իսրայէլի ժողովուրդին, այլ ամբողջ մարդկութեան լսելի դառնայ



Աստուծոյ Որդիին՝ մեր Տիրոջ՝ Յիսուս Բրիստոսի փրկարար խօսքը։

Աւետարանին մէջ յիշուած երգեր

Աւետարանէն գտեք այս հատուածները եւ ընդօրինակեցէք, եւ ըսէք թէ անոնցմէ ո՞ր մէկը ամենէն կարեւորն է ըստ ձեզի։

Ղկ 1.46ր, 4.47 (Սուրբ Կոյսին երգը) _____

Ղկ 2.14 (հրեշտակներուն երգը) _____

Ղկ 2.29-30 (Սիմէոնի երգը) _____

ԸՆՏԱՆԵԿԱՆ միջավայրին մէջ

Սուրբ ըլլալու կոչում

Եկեղեցւոյ ծիսական տօնակատարութիւններուն հետեւելով, կը տեսնենք թէ ինչպէ՞ս Մարիամը սրբութեամբ կը մեծնար: Ան կարծէք թէ տաճարին բոլոր՝ 15 աստիճաններէն վեր կը բարձրանար, ինք ալ Սրբութիւն Սրբոց դառնալով: Այս իրողութիւնը պէտք է նաեւ յիշեցնէ մեզի, որ մենք բոլորս ալ կոչուած ենք սուրբ ըլլալու:

«Միթէ չէ՞ք գիտեր, որ դուք Աստուծոյ Տաճարն էք եւ Աստուծոյ հոգին ձեր մէջ կ'ապրի» (Ա. Կր 3.16): Կարդացէք այս պատմութիւնը սրբուիկներու մասին եւ մտածեցէք թէ մենք ինչպէս կրնանք սուրբ կեանք մը ապրիլ:

ՍՈՒՐԲ ԶՈՒՓՍԻՄԵԱՆ ԿՈՅՍԵՐ

Ս. Զոփիսիմեան եւ Գայանեան կոյսերը քրիստոնեայ նահատակներ են, որոնք կը տօնուին մեր եկեղեցւոյ մէջ իբրեւ վկայուիկներ: Զոփիսիմեան կոյսերը վանական առաքինի կեանք ապրած են Զոռմի մէջ, իրենց մայրապետին՝ Գայանէ Կոյսին գլխաւորութեամբ: Զոռմի Դիոկղետիանոս կայսրին (284-305) հալածանքներէն փախչելով, ի վերջոյ անոնք Զայաստան կ'ապաստանին՝ Վաղարշապատ քաղաքի Զնծանք կոչուած շրջանին մէջ պահուրդելով: Աւանդութիւնը կ'ըսէ որ այս հալածանքին պատճառը՝ իրենց մէջ գտնուող Զոփիսիմէի գեղեցկութիւնն էր, որ մերժած էր Դիոկղետիանոս կայսրին ամուսնական առաջարկը, ու Զոռմի կայսրութեան թագուիկն ըլլալու պատիւը: Կայսրը լուր դրկած էր Զայոց Տրդատ Մեծ թագաւորին, որ անպայման գտնէ Զայաստան ապաստանած փախստականները եւ Զոռմ վերադարձնէ զանոնք, սակայն եթէ կը փափաքի՝ ինք կրնայ ամուսնանալ Զոփիսիմէին հետ: Տրդատ թագաւոր կոյսերը գտնելով եւ տեսնելով չըք-

նաղ Զոփիսիմէն, ինք ալ կը հմայուի անոր չքնաղ գեղեցկութեամբ ու կը սիրահարուի անոր: Սակայն, առաքինի կոյսը կը մերժէ Տրդատ արքային ամուսնական առաջարկը: Այդ պատճառաւ սոսկալի տանջանքներու կ'ենթարկեն զայն: Սուրով կը սպաննեն նաեւ Զոփիսիմէի 32 ընկերուիկները: Սրբուիկներուն մարմինները 9 օր անթաղ կը մնան, մինչեւ որ Խոր Վիրապէն դուրս ելլելէ ետք, Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ կ'ամփոփէ անոնց մարմինները տապաններու մէջ եւ կը թաղէ իրենց նահատակութեան վայրերուն վրայ: Գրիգոր Ա. Լուսաւորիչ Զոփիսիմեան կոյսերը սրբադասած է: Սուրբ Զոփիսիմէի վկայարանին վրայ Կոմիտաս Աղցեցի կաթողիկոսը 618 թուականին կը կառուցանէ Սուրբ Զոփիսիմէ եկեղեցին, որու խորանին տակ, գետնայարկ փոսի մը մէջ մինչեւ այսօր կայ Ս. Զոփիսիմէի տապանաքարը: Սուրբ Զոփիսիմէի տաճարին օծման (նաւակատիք) առիթով, Կոմիտաս կաթողիկոս Զոփիսիմեանց կոյսերուն նուիրուած սոյն շարականը գրած է.

Անծինք նուիրեալք սիրոյն Քրիստոսի, երկնաւոր նահատակք եւ կուսանք իմաստունք. ի պարծանս ձեր բարձրեալ տօնէ, մայր սիրովն դստերօքն իւրովք:

«Բարբառք երկնաւորք լցին գերկիր. քանզի հոտ անուշից բուրեցայք ի Քրիստոս. ողջակէզք բանաւորք եւ զոհք փրկութեան, եւ որոջք անարատք ընծայեալք Աստուծոյ:

Գեղեցկութիւնք մարմնաւոր պայծառութեան ձերոյ, յիմարեցոյց զթագաւորն եւ պակեան հեթանոսք. ի գեղ սքանչելի աստուածատուր կուսանացն, տարփացեալ զուարթութեան ընդ մարդկան տօնեցին:

...Քրիստոս Աստուած բացեր զդուռն հաւատոյ սըրբոյն Զոփիսիմեայ խոստովանել զաստուածութիւնը քո մարտիրոսութեամբ ի մէջ Զայաստանեայց»:

Նախապատրաստութիւն Ծննդեան տօներուն

Ինչո՞ւ համար Քրիստոսի ծնունդէն առաջ, ծննդեան շարականները կը սկսինք երգել: Բոլոր եկեղեցիներուն մէջ երգուող ծննդեան շարականները, աշխարհին կոչ կ'ուղղեն պատրաստուիլ Քրիստոսի գալուստեան: Երկինք, լեռներ ու քարայրներ, հովիւներ ու մոզեր, բոլորն ալ կը սպասեն որ Փրկչին հետ հանդիպին:

Խորհուրդ մեծ եւ սքանչելի որ յայսմ աւուր յայտնեցաւ. հովիւքն երգեն ընդ իրեշտակս, տան աւետիս աշխարհի:

Ծնաւ նոր արքայ ի Բեթղեհէմ քաղաքի. որդիք մարդկան օրհնեցէք զի վասն մեր մարմնացաւ:

Անբաւելին երկնի եւ երկրի ի խանձարուրս պատե-

ցաւ. ոչ մեկնելով ի հօրէ ի սուրբ այրին բազմեցաւ: Ժամանակն է արդէն որ Ծննդեան շնորհաւորական քարտեր պատրաստենք: Դուք ալ կրնաք քարտեր պատրաստել: Պէտք ունիք դանակ մը, երկու-երեք գետնախնձոր, վրձին եւ փոքրիկ պնակ մը:

1. Գետնախնձորը երկու մասի բաժնեցէք:
2. Որոշեցէք թէ ի՞նչ նկար պիտի գծէք: Ապա, ձեր որոշած նկարը գծեցէք գետնախնձորի մէկ մասին վրայ ու փորագրեցէք:
3. Ներկեցէք ձեր փորագրածը եւ սեղմեցէք ձեր շինած քարտին վրայ:
4. Յետոյ ձգեցէք որ լաւ մը չորնայ: Եւ ապա կրնաք ձեր ուզածը գրել անոր տակը կամ շուրջը:

Աստուած Մովսէսին ըսաւ.
«Ես եմ, որ Է: Այսպէս կ'ըսես
իսրայէլացիներուն. որ Է-ն
ինծի որկեց ձեր մօտ»:



Աստուած Մովսէսը կը կանչէ

Խիստ փարաւոնը

Յովսէփն ու իր եղբայրները շատ զաւակներ ունէին: Իսրայէլի ժողովուրդը՝ Յակոբի զաւակները, ամբողջ Եգիպտոսի մէջ տարածուեցան ու բազմացան: Իշխանութեան գլուխ անցաւ մոր փարաւոն մը, որ չէր ճանչնար Յովսէփը ու անոր զաւակները:

Ան տեսաւ, որ հրեաները՝ Իսրայէլի ժողովուրդը գօրաւոր է ու քանակով ալ աւելի քան եգիպտացիները: Նոր փարաւոնը, շինարարական ծանր աշխատանքներ դրաւ անոնց ուսերուն, սակայն հակառակ անոր, հրեաներուն թիւը չպակսեցաւ: Փարաւոնը սկսաւ մտահոգուիլ այս հարցով: Եւ այն ատեն հրամայեց որ սպաննեն հրեաներուն մորածիկները: Այսպիսով մորածիկն երեխաները Նեղոս գետը նետելով կը սպաննէին:

Աստուած կը փրկէ մորածիկը

Գրեայ ընտանիք մը փորձեց իր մորածիկը պահել: Անոնք յաջողեցան երեք ամիս պահել փոքրիկը, սակայն որքա՞ն ատեն կրնային այդպէս շարունակել, որովհետեւ մանուկը կը մեծնար եւ ալ կարելի չէր զայն պահել: Ան արդէն մեծցած էր, ուստի մայրը ճարահատ, եղէգներով զամբիւղ մը հիւսեց, որուն մէջ պահեց իր զաւակը: Սակայն երբ ալ կարելիութիւն չկար պահելու, ստիպուեցաւ զայն Նեղոսի ափը տանիլ ու ձգել ջուրերուն վրայ՝ այն յոյսով որ Աստուած կ'ողորմի եւ երեխային լացը լսելով, մէկը զայն կը վերցնէ իր մօտ: Երեխային քոյրը՝ Մարիամ, մացառներուն մէջ պահուրդ տելով սպասեց, որպէսզի տեսնէ թէ ո՞վ պիտի վերցնէ զայն: Եւ տեսաւ, թէ ինչպէս փարաւոնին աղջիկը իր ընկերուհիներուն հետ գետին մօտեցաւ ու պատրաստուեցաւ որ լողայ: Ջամբիւղը տեսնելով, որուն մէջ կուլար մանկիկը, խղճաց ու վերցուց զայն: Այդ պահուն Մարիամը դուրս վազեց թուփերուն ետեւէն եւ հարցուց թէ, պէտք չէ՞ որ կին մը անոր հոգ տանի. «Ամշուշտ», պատասխանեց փարաւոնին աղջիկը, եւ Մարիամ վազեց ու իր մայրը կանչեց:

Փարաւոնին աղջիկը որդեգրեց այդ երեխան եւ անոր մօր գումար մը վճարեց, որպէսզի խնամք տանի մանուկին: Գիմա, ան ամբողջութեամբ փրկուած էր: Ո՞վ կրնար այլեւս դաչիլ անոր:

Տղուն անունը Մովսէս դրին (այսինքն՝ ջուրէն գտնուած):

Իսկ այս բոլորը կը պատահէին Աստուծոյ յատուկ նախաճառութեամբ:

Մովսէսին կոչումը

Փարաւոնին աղջիկը իբրեւ իր զաւակը կ'ընդունէր Մովսէսը: Իսկ Մովսէս գիտէր թէ ինք հրեաներէն սերած է: Ան գիտէր նաեւ, որ եգիպտացիները իր ժողովուրդին

լաւ վերաբերմունք ցոյց չեն տար: Օր մը Մովսէս տեսաւ, թէ ինչպէս եգիպտացի մը բրտութեամբ կը ծեծէր իր հրեայ ծառան եւ ինք փորձեց պաշտպանել զայն, ու սպաննեց եգիպտացին: Այս սպանութիւնը անհետեւանք չմնաց, եւ փարաւոնին բարկութենէն վախճալով, Մովսէս փախուստ տուաւ պալատէն:

Այնուհետեւ հովիւ դարձաւ ան մաղիանացիներուն Յոթոր քուրմին մօտ եւ անոր ոչխարները կ'արածէր: Օր մըն ալ ոչխարները անապատ տարաւ եւ հասաւ մինչեւ Քորեբ՝ Աստուծոյ լեռը: Այնտեղ Տիրոջ հրեշտակը երեւցաւ իրեն մորենիին մէջ, կրակի բոցով: Մովսէս տեսաւ որ մորենին կ'այրի բայց չի սպառիր: Երբ Տէրը տեսաւ որ Մովսէս մորենին կը մօտենայ, անոր երեւցաւ ու ըսաւ. «Մովսէս, Մովսէս»: Ան ըսաւ. «Այո՛, Տէր»: Աստուած ըսաւ. «Մի՛ մօտենար այստեղ: Կօշիկներդ հանէ՛ ոտքերէդ, որովհետեւ հոն ուր կեցած ես, սուրբ հող է»: Եւ աւելցուց. «Ես եմ քու հօրդ Աստուածը, Աբրահամի Աստուածը, Իսահակի Աստուածը եւ Յակոբի Աստուածը»: Եւ Մովսէս իր դէմքը դարձուց, որովհետեւ Աստուծոյ նայելու կը վախճար: Աստուած անոր ըսաւ, որ Ինք ականատես եղած է Եգիպտոսի մէջ ապրող իսրայէլացիներու տառապանքին եւ իջած՝ որպէսզի փրկէ զանոնք եգիպտացիներուն ձեռքէն, հանէ զանոնք այդ երկրէն, ու տանի ընդարձակ ու լաւ երկիր մը:

Եւ Աստուած հրամայեց Մովսէսին երթալ փարաւոնին մօտ եւ անոր ըսել, որ պէտք է ազատ արձակէ հրեայ ժողովուրդը: Այս լսելով, Մովսէս վախցաւ, հակառակ անոր որ Աստուած խոստացաւ իր հետ ըլլալ: Եւ Աստուած Մովսէսին հրամայեց, որ իր ժողովուրդը դէպի Քորեբ լեռը առաջնորդէ, որպէսզի այնտեղ Աստուծոյ աղօթքն միասնաբար:

Աստուած իր անունը կը յայտնէ

Մովսէս վստահ չէր թէ ժողովուրդը իրեն պիտի հաւատա՞ր կամ՝ ոչ: Եւ Աստուծոյ ըսաւ. «Կ'երթամ իսրայէլացիներուն մօտ ու անոնց կ'ըսեմ. “Չեր հայրերուն Աստուածը զիս դրկեց ձեր մօտ”: Եւ եթէ անոնք հարցնեն թէ ի՞նչ է անոր անունը, ի՞նչ պատասխան պիտի տամ անոնց»: Աստուած Մովսէսին ըսաւ. «Ես այն Աստուածն եմ, որ է» եւ աւելցուց. «Իսրայէլացիներուն այսպէս կ'ըսես. “Որ է-ն զիս ձեր մօտ դրկեց”»:

Մովսէս օգնական կ'ունենայ

Այս բոլորէն յետոյ, տակաւին Մովսէս չէր ուզեր երթալ, պատճառաբանելով թէ ինք լաւ չի կրնար խօսիլ. ուստի Աստուծո՞ն խնդրեց որ իրեն օգնական մը տայ: Աստուած հրամայեց որ Մովսէսին մեծ եղբայրը՝ Ահարոնը իրեն օգնէ: Այսպիսով Մովսէս տուն վերադարձաւ եւ ուղղուեցաւ փարաւոնին մօտ, Աստուծոյ խօսքը անոր փոխանցելու համար:

Այս տուփերում մեջ մկարներ գծեցէ՛ք, որոնք կ'օգնեն Մովսէսի պատմութիւնը պատմելու:



Աւետարանին հեղինակները (Դ. Մաս)

Սուրբ Մարկոս Առաքեալ եւ Աւետարանիչ

Սուրբ Մարկոս Առաքեալ եւ Աւետարանիչը Երուսաղէմ կ'ապրէր: Նախապէս ան Յովհաննէս կը կոչուէր, իսկ Մարկոսը իր հռոմէական անունն էր: Առաքեալները յաճախ կը հաւաքուէին Մարկոսեմց տունը՝ աղօթելու համար (Գրծ 12.12):

Մարկոսը Յիսուսը ճանչցաւ Անոր երկրաւոր կեանքին ընթացքին, սակայն ան մտերիմն էր Պետրոս առաքեալին: Պետրոս իր թուղթերուն մէջ մէկ անգամ անոր անունը կուտայ ըսելով. «Մարկոս, որդի՛ս» (Ա. Պտ 5.13): Մարկոսը ուշադրութեամբ մտիկ կ'ընէր Պետրոս առաքեալի քարոզութիւնները եւ գրի կ'առնէր անոր խօսքերը:

Մարկոսի աւետարանը ամէնէն կարճն է միւս աւետարաններու բաղդատած եւ շատ մը հոգեւոր հայրերու կարծիքով, անիկա ամէնէն առաջ գրուած աւետարանն է: Պապիոս Դերապոլսեցիին կարծիքով՝ «Մարկոս՝ Պետրոսի թարգմանիչը, ճշգրտութեամբ գրի առած է ինչ որ յիշած է, սակայն դէպքերուն շարքը ճիշդ չէ պահած: Ան Քրիստոսի քարոզութիւնները չէ լսած ուղղակիօրէն»:

Մարկոս շատ գեղեցկօրէն նկարագրած է դէպքերը: Յիսուս Քրիստոսի մասին անոր գրածը շատ պարզ է ու հասկնալի: Հաւանական է որ ան իր աւետարանը գրած է Հռոմ գտնուած ժամանակ, որովհետեւ եկեղեցւոյ հնազոյն վկայութիւններուն համաձայն, ան ծառայած է Հռոմի քրիստոնեաներուն: Ղուկասի նման ան կը գրէ այն մարդոց մասին, որոնք տակաւին հաւատքի արթնութիւն չունին եւ բան չեն լսած Յիսուս Քրիստոսի կամ Սեսիային մասին, որ եկած էր ամբողջ մարդկութիւնը մահէն ու մեղքէն ազատելու: Երիտասարդ եղած



օրերուն, իր զարմիկին՝ Բառնաբասի հետ, Մարկոս աւետարանիչ Պողոսի հետ ճամբորդած է, անոր առաջին առաքելական ճամբորդութեան ժամանակ: Այնուհետեւ Մարկոսը հասած է մինչեւ Կիպրոս, սակայն շուտով Երուսաղէմ վերադարձած է (Գրծ 12.25, 13.4-5): Հետագային Մարկոս առաքեալը Աղեքսանդրիայի եկեղեցւոյ հիմնադիրը դարձաւ, ուր նաեւ նահատակուեցաւ Քրիստոսի համար, 63 թուականի Ապրիլ 4-ին:

Մարգարեական խօսքեր Աւետարանին մէջ

Մարկոսի Աւետարանէն գտե՞ք այս խօսքերը: Պատասխանեցէ՛ք նշուած հարցումներուն եւ անոնց տակը զրեցէ՛ք մարգարեական այն արտայայտութիւնները, որոնք ձեզ շատ տպաւորեցին:

Մր 1.2-4: Ո՞վ ըսած է այն խօսքը, թէ մէկը պիտի գայ որ Տիրոջ ճամբան պիտի պատրաստէ:

Մր 1.15: Ի՞նչ ըսած է մեր Տէրը Յիսուս Քրիստոս իր քարոզութեան սկզբնաւորութեան:

Աւետեցէ՛ք Փրկչին գալուստը

Մարգարեներուն մասին

Այսօր ցնծան երկինք ի վերուստ մեծապայծառ աւետեօք. եւ արարածք ամենայն զգեցան հանդերձ փրկութեան:

Այսօր յայրին ընծայեցաւ Քրիստոս Որդին Աստուծոյ. եւ հրեղինաց բազմութիւնք յերկնից յերկիր վայր իջեալ:

Այսօր հովուացն տեսեալ զարդարութեան արեգակն. եւ ընդ հրեշտակս երգէին փառք ի բարծունս Աստուծոյ:

«Տնծա՛ւ Եսայի, Աստուծոյ Բանը կը ծնի Կոյս Մարիամն...»

Հին Կտակարանի չորս մեծ մարգարեներէն մէկն է Եսայիին, իբրեւ աւետաբեր եւ մեկնաբանող: Աստուած ի՛նք, Երեմիա մարգարէին կ'ըսէ. «Ահա իմ խօսքս քու բերանդ դրի» (Եր 1.9): Մարգարէին խօսքը թէ՛ ներկային եւ թէ՛ ապագային կը վերաբերի: Ան մարդոց մօտ կը զրկուի՝ Աստուծոյ կամքը յայտնելու համար: Մարգարէն ազգերուն ու թագաւորներուն մօտ կը զրկուի, որպէսզի «զանոնք քանդէ ու կործանէ, կառուցէ ու հաստատէ» (Եր 1.10): Ամոր միջոցաւ բարի լուրը կը տարածուի մարդոց՝ թէ Աստուծոյ խօսքը պիտի մարմնանայ, թէ՛ աստուածային հատուցում կայ, թէ՛ դարձի չեկող մեղաւորները փրկութեան պիտի չարծանանան ու պիտի պատժուին:

Եսայիի մարգարեութեան գիրքին մէջ մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի մօտալուստ գալուստին մասին շատ կը խօսուի: Այդ գիրքին մէջ երկու մարգարեութիւն գտէք ու կարդացէք: Գրեցէ՛ք այն անունները, որոնք տրուած են Փրկչին:

Ես 7.14

Ես 9.2, 6-7

Միքիա եւ Ջաքարիա մարգարեներն ալ խօսած են Տիրոջ գալուստին մասին: Կարդացէ՛ք անոնց տուած խորհուրդները, թէ՛ ինչպէ՛ս պէտք է դիմաւորել Փրկչին գալուստը:

(Միք 6.24

Ձք 1.7, 2.3, 3.8-9):

Աւետեցէ՛ք Փրկչին գալուստը

Այս աւետիսը կրնաք տալ մարգարեներուն խօսքերով: Շնորհաւորական քարտերուն վրայ հրեշտակներու փողեր զօնեցէ՛ք: Իսկ անոնց ներսի կողմը գրեցէ՛ք Եսայիի գործէն քաղուած մարգարեութիւնները: Հրեշտակներու փողին տեղը կրնաք նաեւ ձեր նախընտրած փողը զօնեցնել, ասիկա աւելի հաճելի կ'ըլլայ մեծերուն, մանաւանդ երբ մարգարեներու խօսքերէն մէջբերումներ կ'ընէք:



Այս աշխատանքին համար ձեզի պէտք են՝ խաւաքարտ, խէժ, տարբեր գոյներով փայլուն թուղթեր:

1. Փայլուն թղթիկներէն աստղեր կտրեցէք, խէժ դրէք անոնց ու փողին երկու կողմերը փակցուցէք:
2. Փողը զարդարեցէք զանազան նաշխերով՝ ձեր ճաշակին:
3. Ձայն զարդարեցէք զանազան աստղերով եւ գունաւոր երկար ուլորուն թուղթերով, եւայլն:
4. Իսկ հիմա նայեցէք, թէ ի՞նչ տեսք ունեցաւ ձեր շինած փողը, ու մանաւանդ ի՞նչ ձայն կու տայ ան:

Ընտանեկան միջավայրին մեջ

Այսօրուան մեր գլխաւոր նիւթը անտուճը եւ մարգարէութիւնն է: Մենք խօսեցանք թէ եկեղեցին ի՞նչ ձեւով կը կատարէ տօները, նաեւ թէ՝ մարգարէները ի՞նչ ձեւով կ'աւետէին Տիրոջ գալուստը եւ անոր կամքը իր ժողովուրդին համար, թէ ինչպէ՞ս՝ Սուրբ Մատթէոս առաքեալն ու անտարանիչը կը յիշեցնէ Յիւն Կտակարանի մարգարէութիւնները աշխարհի Փրկչին մասին: Ապա, խորհրդածեցէք սպասումի եւ հիացումի զգացումներուն մասին, որոնք նախորդած էին այն բոլոր դէպքերուն, որոնք մեր այսօրուան կեանքը կը լեցնեն: Մենք շատ առիթներ ունինք ուրախանալու (մանուկի մը ծնունդը, սպասուած հիւրի մը այցելութիւնը, ծնընդեան տարեդարձներ, եւայլն): Նաեւ հակառակը՝ մենք

յաճախ կը տխրինք (մահ, ծախորդութիւն, մեր սպասածին հակառակ դէպք, եւայլն): Ինչպէ՞ս պէտք է վարուիլ ոչ սովորական դէպքի մը պարագային: Մարգարէները Աստուծոյ կամքը կը յայտնեն մեզի: Անոնց կատարած մարգարէութիւնները երբեմն մարդոց հաշուին եկած է եւ երբեմն ալ՝ ոչ: Հիմնականը այն է, որ մարգարէութիւնները Աստուծմ կը տրուին: Այս կը նշանակէ, որ անոնք շատ օգտակար են մեր կեանքը բարեփոխելու համար ու դէպի Աստուած դառնալու եւ տեսնելու թէ ի՞նչ է Աստուծոյ կամքը եւ ինչպէ՞ս պէտք է զայն գործադրել մեր կեանքին մէջ ու արժանանալ յաւիտեանական կեանքի:

ՍՐԲԱՊԱՏԿԵՐ



Սրբապատկերները, ընդհանրապէս Յիսուս Քրիստոսի, Մարիամ Աստուածածնի, Աստուածամօր գիրկը Յիսուս Մանուկին, սուրբերու, Սուրբ Գիրքի զանազան դրուագներու նկարներն են, որոնք Ուղղափառ եկեղեցիներուն մէջ երբեմն կը ճանչցուին նաեւ հրաշագործ զօրութեամբ: Սրբապատկերներու արուեստը, միջնադարեան նկարչական պաշտամունքի ձեւ մըն էր: Երկրորդ դարէն սկսած է այս արուեստը եւ չորրորդ ու անելի ուշ դարերուն անելիով ծաղկած է: Սրբապատկերը առեղծուածային բան մը չունի իր մէջ, անիկա նիւթ է պարզապէս, որ միայն օրինակ կը ծառայէ՝ նայելու Յիսուսին, Աստուածամօր, կամ ոեւէ սուրբի՝ իբրեւ մեր տիպարները եւ հաղորդուելու անոնց: Որմանը կարչութենէն ու մանրանկարչութենէն տարբեր՝ սրբապատկերային արուեստը ուրիշ տեսակի ստեղծագործութիւն է, փայտի, կտաւի կամ այլ նիւթերու վրայ կատարուած:

Հայ մատենագրութեան մէջ սրբապատկերներու մա-

սին առաջին տեղեկութիւնը կը գտնենք Մովսէս Խորենացիի «Հայոց Պատմութիւն» հատորին մէջ: Առաջին վկայութիւնը Յիսուսի նկարին մասին է, որ Եղեսիոյ Արգար թագաւորին ուղարկուած է: Ըստ անանդութեան, այդ նկարին հիման վրայ հետագային Յիսուսը գծած են իբրեւ Նազովրեցի: Յաջորդ պատկերը Վասպուրականի Անձեւացեաց զաւառի Հայոց վանքի Ս. Աստուածածին եկեղեցւոյ Աստուածամօր նկարն է, որ ըստ Մովսէս Խորենացիի, Յովհաննէս անտարանիչը գծած ու նուիրած է Բարթողիմէոս առաքեալին: Առաքեալը այդ պատկերը բերած է Վասպուրական եւ Ղարքնաց Զար կոչուած վայրին մէջ հիմնած է Ս. Աստուածածին եկեղեցին, հոն դնելով Աստուածամօր նկարը:

Հայկական սրբապատկերներու նմոյշ միջնադարէն բնաւ չունինք ներկայիս, թէւ Մովսէս Խորենացին, Վրթանէս Զերթողը, Մովսէս Կաղանկատուացին, Ներսէս Շնորհալին, Անանիա Սանահնեցին եւ ուրիշներ սրբապատկերներու արուեստին մասին գրած են: Ուղղափառ եկեղեցիներէն տարբեր, Հայ եկեղեցին մասնաւոր դիրք ճշդած է սրբապատկերներուն նկատմամբ: Հայեր անելի խաչապաշտ եղած են եւ խաչի պաշտամունքը անելի տարածուած եղած է քան պատկերները:

Հայ եկեղեցւոյ մէջ պատկերը յատուկ կանոնով կը զետեղուի. մայր խորանին վրայ՝ Աստուածամայրը գիրկը մանուկ Յիսուս, խորանին ներսի կողմը՝ 12 առաքեալները, փոքր խորաններուն ու մատուռներուն վրայ կարելի է դնել Ս. Յովհաննէս Մկրտիչի, Ս. Ստեփանոս Նախավկայի պատկերները, մկրտարանին մէջ՝ Յիսուսի մկրտութեան պատկերը: Գաւիթին մէջ ալ՝ երկու կողմերը, կարելի է սրբապատկերներ դնել:

Պատկերները, երբ ալ նկարուած ըլլան, կամ գործածական դարձած ըլլան եկեղեցիներէն ներս, հայ եկեղեցիէն ներս գործածութեան կը դրուին յատուկ ծեսով օրհնուելէ ու միւռնոսով օծուելէ ետք:

ԱՍՏՈՒԱԾ ԻՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԴՈՒՐՍ ԿԸ ԲԵՐԷ ԵԳԻՊՏՈՍԵՆ

Դաս 14

«Մովսէս ձեռքը երկարեց ծովուն
վրայ եւ Աստուած ծովը ձեռքեց...
եւ ջուրը երկուքի բաժնուեցաւ»



Աստուած իր ժողովուրդը դուրս կը բերէ Եգիպտոսէն

Ահարոնն ու Մովսէսը հաւաքեցին Իսրայէլի ժողովուրդին մեծերը, եւ Ահարոնը անոնց ներկայութեան ըսաւ այն խօսքերը, զոր Աստուած Մովսէսին ըսած էր, եւ Մովսէսն ալ որոշ նշաններ ցոյց տուաւ անոնց: Եւ ժողովուրդը հաւատաց, որ Աստուած պիտի ազատէ զիրենց Եգիպտական լուծէն: Աստուած Մովսէսին ըսաւ. «Նայէ՛, այն բոլոր հրաշքները որոնք կատարելու իշխանութիւն տուի քեզի, միայն փարաւոնին առջեւ կը կատարես: Ես փարաւոնին սիրտը պիտի կարծրացնեմ եւ ան ազատ պիտի չարծակէ իմ ժողովուրդս: Եւ փարաւոնին կ'ըսես. Այսպէս կ'ըսէ Աստուած. "Իսրայէլը իմ անդրամիկ որդիս է, արծակէ իմ ժողովուրդս, որպէսզի երթան ու զիս պաշտեն, իսկ եթէ չարծակես" քու անդրամիկ որդիդ պիտի սպաննեմ»»: Ահարոն եւ Մովսէս եղբայրները փարաւոնին քով գացին եւ ըսին. «Աստուած պատուիրեց, որ իր ժողովուրդը արծակես»: Փարաւոնը պատասխանեց. «Աստուած ո՞վ է որ ես անոր խօսքը մտիկ ընեմ: Ես Աստուած չեմ ճանչնար եւ չեմ ձգեր որ Իսրայէլի որդիները երթան»: Եւ իր մարդոց հրամայեց. «Այս մարդոց աշխատանքը աւելի ծանրացուցէ, որպէսզի ատով զբաղին եւ անիմաստ խօսքերով ժամանակ չվատնեն»: Ապա, Աստուած դարձեալ փարաւոնին քով դրկեց երկու եղբայրները, դարձեալ իր ժողովուրդը ազատ արծակելու առաջարկով եւ ագարարութեամբ:

Աստուծոյ նշանները

Փարաւոնը մտիկ չըրաւ երկու եղբայրներուն խօսքը, որովհետեւ Աստուած կարծրացուցած էր անոր սիրտը: Ապա, Աստուած մեծ աղէտ մը բերելու իշխանութիւն տուաւ Մովսէսին: Նեղոսը արեան գետի վերածեց ան: Իսկ մեծերը այնքան շատ էին, որ խումբով կը կըպչէին մարդոց դէմքին եւ կենդանական ամբողջ աշխարհը կը տառապէր: Փարաւոնը միշտ Մովսէսէն կը խընդրէր աղօթել Աստուծոյ, որ ան դադրի Եգիպտոսը հարուածելէ: Սակայն յետոյ դարձեալ ետ կը կենար անոր կամքը կատարելու խոստումէն ու ազատ չէր ձգեր Իսրայէլի ժողովուրդը: Աստուած կը շարունակէր աղէտներ տեղացնել փարաւոնին երկրին վրայ: Սակայն թագաւորը անդդողելի կը մնար, որովհետեւ Աստուած կարծրացուցած էր անոր սիրտը: Եւ Աստուած ձեւը գտաւ. կէս գիշերին, բոլոր Եգիպտացիներուն անդրամիկ զաւակները մեռան: Ասիկա 10-րդ պատիժն էր որ Աստուած տուաւ անոնց: Մովսէս լուր տուաւ փարաւոնին, որ եթէ չանդրադառնայ ու չձգէ որ Իսրայէլացիները երթան, ազատում չունի: Իսկ փարաւոնը կարեւորութիւն չտուաւ եւ պալատէն դուրս վրնտեց Մովսէսը:

Քատիկը

Եւ այսպէս, Աստուած Մովսէսին պատուիրեց, որ ամսուան 10-րդ օրը իւրաքանչիւր Իսրայէլացի ընտանիքէն ներս մէկ տարեկան զառնուկ կամ ուլ մը մորթեն, խորովեն եւ ուտեն կծու համեմներով ու բաղարջ (ա-

ռանց թթմորի) հացով: Իսկ ամէնէն կարեւորը այն էր, որ անոնք զառնուկին արիւնը պէտք է քսէին իրենց դրան մուտքին, երկու տեղ եւ դրան վերեւ, իբրեւ նշան, որով Աստուած Իսրայէլացիներու եւ Եգիպտացիներուն տուները այդ նշանով պիտի զանազանէր: Աստուած անոնց հրամայեց, որ մինչեւ լոյս իրենց տուներուն մէջ մնան եւ տեղ մը չերթան: Եւ ահա երբ սոսկալի գիշերը հասաւ, Եգիպտացիներուն անդրամիկ զաւակները մեռան, փարաւոնին անդրամիկէն սկսեալ մինչեւ վերջին Եգիպտացիին անդրամիկ որդին, ինչպէս նաեւ սատկեցան անոնց անասուններուն անդրամիկ ծագերը: Սակայն Իսրայէլի որդիներէն ոչ ոքին զաւակը չմեռաւ: Աստուած անոնց տուններուն քովէն անցած էր:

Ասկէ ետք, փարաւոնը իր քով կանչեց Մովսէսն ու Ահարոնը եւ ըսաւ, որ Իսրայէլի որդիներուն եւ անոնց զաւակներուն ու անասուններուն հետ կրնան երթալ ուր որ կ'ուզեն:

Ծովն անցքը

Երկար ճամբորդութեան համար ճամբայ ելլելով, իրեաները իրենց հետ առին նաեւ Յովսէփի աճիւնները: Ան իր կենդանութեան ատեն փափաք յայտնած էր Քանանի մէջ թաղուիլ: Աստուած անոնց առջեւէն կ'երթար. ցերեկ ատեն ամպի սիւնով կ'առաջնորդէր զանոնք, իսկ գիշեր ատեն՝ կրակէ սիւնով: Սակայն, երբ Իսրայէլի որդիները սկսան հեռանալ Եգիպտոսէն, իր պարտ փարաւոնը զոջաց իր տուած արտօնութեան: Ինչպէ՞ս կրնայ ըլլալ որ իր ծառաները ազատ արծակուեցան: Ան հրամայեց որ պատրաստեն բոլոր կառքերը եւ անոնց ետեւէն հասնին:

Եգիպտոսէն ելլողները իրենց ետեւէն հալածողներուն ձայները լսեցին եւ սկսան մեղադրել Մովսէսը: Անոնք մահէն կը վախճային եւ կ'ըսէին. «Աւելի լաւ էր որ Եգիպտոսի մէջ ծառայ ըլլայինք, քան թէ չարաչար մահով այստեղ՝ անապատին մէջ մեռնէինք»: Մովսէս բռնաւ չէր յուսահատեր եւ միշտ կը քաջալերէր ժողովուրդը ըսելով. «Քաջալերուեցէ՛ք, ու պիտի տեսնէք թէ Տէրը ինչպէ՞ս կը փրկէ, որովհետեւ ձեր տեսած Եգիպտացիները ալ բնաւ պիտի չտեսնէք»:

Ոմանք կը փորձէին փախչիլ, սակայն ո՞ր երթային: Ետեւնէն փարաւոնին զինուորները կու գային, իսկ դիմացինն ծովն էր: Այդ պահուն Աստուած այնպէս ըրաւ, որ ամպի սիւնը իրենց առջեւէն ելաւ ու իրենց կռնակը գնաց, որպէսզի պաշտպանէ զիրենք: Սիւնը Իսրայէլացիներուն եւ Եգիպտացիներուն միջեւ եղաւ: Եւ Աստուած Մովսէսին հրամայեց իր զաւազանը ջուրին զարնել: Եւ Տէրը ամբողջ գիշերը արեւելեան զօրաւոր հով հանելով, ջուրերը բացաւ եւ ծովուն յատակը երեւցաւ: Անոնք բացուած ծովուն մէջ մտան եւ քալելով անցան: Փարաւոնին ծիաւորներն ալ մտան, հալածելու համար զանոնք:

Եւ Աստուած հրամայեց Մովսէսին որ դարձեալ գաւազանը զարնէ ցուրին: Ծովը սկսաւ գոցուիլ եւ եգիպտական կառքերը խեղդուեցան: Իսրայէլի որդիները արդէն ազատուած էին վտանգէն եւ սկսան զԱստուած փառաբանող երգեր երգել:

Այն ատեն Մովսէսն ու իսրայէլացիները հետեւեալ օրիները ուղղեցին Աստուծոյ. «Օրհնեցէ՛ Տէրը, որ փառքով փառաւորուած է: Անոնց կառքերն ու ձիաւորները ծովուն մէջ լեցուց: Տէրը ինծի օգնական եղաւ, ան ինծի փրկութիւն տուաւ: Ան իմ Աստուածս է, ու ես զինք պիտի փառաւորեմ: Ան իմ հօրս Աստուածն է, եւ ես զինք պիտի յարգեմ: Տէրը կը խորտակէ պատերազմները, Անոր սուրբ անունը Տէր է» (Ելք 15.1-3):

Քրիստոնէական Զատիկին օրինակը

Եգիպտոսէն դուրս գալը հրեաներուն համար տարեկան տօն մը դարձաւ, եւ զայն կը տօնէին իբրեւ իրենց ամենէն մեծ տօնը՝ առաջին ամսուան 14-րդ օրը: Անիկա Զատիկ կոչուեցաւ, այսինքն՝ կամաց անցնիլ (մահը անցաւ անոնց տան մօտէն), դռներուն վրայ դրուած արեան նշանը, խաչի խորհուրդը ունէր իր մէջ:

Գառնուկը, որուն արիւնը փրկեց իրենց անդրանիկ գաւակները, կը խորհրդանշէ մեր Փրկիչը, որուն արիւնը մեզ փրկեց յաւիտենական մահէն: Խաչին վրայ Փրկչին մահը տեղի ունեցաւ հրեական Զատիկին մախորդ օրը, ճիշդ այն օրը, երբ անոնք տօնին առիթով գատկական անմեղ գառնուկներ կը մորթէին:

Նշեցէ՛ք, թէ  ինչո՞վ կը ճամբորդէին մարդիկ սուրբ գրական ժամանակներուն:

Նշեցէ՛ք, թէ  ինչո՞վ կը ճամբորդէին մարդիկ այսօր:

Նշեցէ՛ք, թէ  դուք ճամբորդել կը սիրե՞ք:

Նշեցէ՛ք, թէ  ո՞ր մէկ փոխադրամիջոցը ամենէն արագն է:

Նշեցէ՛ք, թէ  ո՞ր մէկ փոխադրամիջոցով ամենէն աւելի կը ճամբորդէք:

Նշեցէ՛ք, թէ  ամենէն դանդաղ փոխադրամիջոցը ո՞ր մէկն է:




Մարդիկ ինչպէ՞ս ճամբորդած են Սուրբ Գրական ժամանակաշրջանին

Ե՞րբ էր ձեր կեանքին ամենէն երկար ճամբորդութիւնը: Ինչպէ՞ս ճամբայ ելաք եւ ինչպէ՞ս հասաք: Այսօր մենք ընդհանրապէս կը ճամբորդենք օդանաւով, շոգեկառքով հանրակառքերով ու ինքնաշարժերով: Սակայն այդպէս չէր Սուրբ Գրային ժամանակներուն: Մարդիկ ստիպուած էին քալելով երթալ երկար ճամբաներ: Երբեմն ալ իբրեւ փոխադրամիջոց, անոնք կ'օգտագործէին էշեր եւ ուղտեր: Ծովեր անցնելու համար փոքր նաւակներ կը գործածէին: Այդ նաւերուն ճամբաները շատ երկար չէին ըլլար, երբեմն ալ քաղղատած մեր օրերուն՝ շատ երկար կ'ըլլային: Գառնուկները երբեմն ամիսներ ու տարիներ կը տեւէին: Սուրբ Գիրքէն այն հատուածները գտէք, ուր կը խօսուի ճամբորդութիւններու մասին (Ծն 24.62-66, Թւ 29.5, Դկ 19.28-36): Փորձեցէ՛ք գտնել, եթէ կ'ուզէք մեծերուն օժանդակութեան ալ դիմեցէ՛ք, թէ ամէն մէկ ճամբորդութիւն ինչքա՞ն տեւած է:

Նազարէթ

Այստեղէն մարդիկ Նային քաղաք կրնան հասնիլ ժամը 5 քլմ. արագութեամբ: Ուրեմն ինչքա՞ն ժամանակ պէտք է այս ճամբան կտրելու համար



Իշուկը ժամական 5 մղոն ճամբայ կը կտրէ: Ինչքա՞ն ժամանակ պէտք է որ իշուկը եւ անոր տէրը երիքով քաղաքը հասնի




Կիպրոս

Նաւը Կիպրոս կղզիէն դէպի Տիրոս օրական 50 մղոն արագութեամբ կ'ընթանայ: Քանի՞ օրէն անիկա Տիրոս կը հասնի:



Դամասկոս

Եթէ ձեր ինքնաշարժը դէպի Անտիոք կ'երթայ ժամական 50 քլմ. արագութեամբ, քանի՞ ժամ պէտք ունիք Անտիոքէն Դամասկոս երթալու համար:



Օգնենք մեր ընկերներուն

Ծննդեան պահքի ընթացքին

Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօները երբ մօտենան, բնականաբար մենք սովորականէն աւելի զբաղած կ'ըլլանք: Որովհետեւ պէտք է լաւապէս պատրաստուինք դիմաւորելու Քրիստոսի Ծնունդը, մեղքերէն մաքրուինք եւ Ս. Ստեփանոս Նախավկայի տօնին համար մեր հոգիներուն, մեր տուններուն եւ մեր կեանքերուն մէջ լաւ տեղ պատրաստենք: Բոլորս ալ կ'ուզենք որ մեր տան մէջ տօնական մթնոլորտ ստեղծուի, ուստի կ'ուզենք կոկել ու զարդարել զանիկա: Որովհետեւ մեր հարազատները ու մեր ազգականները պիտի հրաւիրենք, որոնք մեզի հետ պիտի անցընեն այս տօները:

Ամբողջ աշխարհի կը պատրաստուի Քրիստոսի Ծննդեան

Եթէ ուշադիր նայինք մեր այն եկեղեցական երգերուն ու շարականներուն, որոնք Քրիստոսի Ծննդեան նախօրեակին կ'երգուին, հոն անպայման կը տեսնենք Փրկչին ծնունդը աւետող խօսքեր.

Ջրեզ հայր յառաջ քան զյաւիտեանս բարեբանեն դասք անմարմնոց հրեշտակաց. ձայնիւ երգով զօչեն եւ աղաղակեն. աստուած աստուծոց եւ տէր տէրանց փրկիչ գոլով:

Առաքեցեր զքո միածինդ մարմնանալ ի սուրբ կուսէն. եւ անարատ ծնանիլ յորովայնէ անապական, բառնալով զմեր նեղութիւնս. աստուած աստուծոց



Յովհաննէս Օծնեցի

Սուրբեր

Սուրբերը իրենց կեանքը Աստուծոյ նուիրած մարդիկ են. անոնք ամէն բանի մէջ Աստուծոյ պատուիրաններուն հետեւած են: Անոնք իրենց ամձը ընծայած են բարի գործեր կատարելու եւ Աստուծոյ կամքը կատարելու: Սուրբերը չէին վախճար Աստուծոյ նկատմամբ իրենց սէրը բացայայտօրէն արտայայտելէ, նոյնիսկ եթէ զիտնային որ այդպէս ընելով պիտի նահատակուէին: Սուրբերէն շատերը քարոզիչներ եղած են եւ Աւետարանի լոյսը տարածած են մարդոց մէջ: Սուրբերը Տիրոջ մասին քարոզած են ամէն տեղ, հայրենիքի մէջ ու իրենց տան մէջ: Անոնցմէ ոմանք ալ աղքատներուն օգնելու նուիրուած են. անոնք կ'օգնէին անոնց՝ որոնք դժբախտ են, կամ անկողինի մէջ պառկած զանազան հիւանդութիւններով: Անոնց մէջ կային նաեւ ճգնաւորներ, որոնք կ'աղօթէին Աստուծոյ՝ ամբողջ աշխարհի փրկութեան համար: Շատ է անոնց թիւը. առաքեալներ, աւետարանիչներ, պարզ վանականներ, ճգնաւորներ, իմաստուն քաղաւորներ, դեկավարներ: Անոնք Աստուծոյ հնազանդ կեանք մը ապրած են: Սուրբերու կարգին դասուած են նաեւ բարեպաշտ եպիսկոպոսներ ու քահանաներ, քարոզիչներ եւ ուսուցիչներ, անմշան արդար մարդիկ ու համարձակ գերիստոս խոստովանողներ: Անոնք նահատակուած են մեզի ցոյց տալով Սուրբ Դոգիին իսկական պտուղները՝ սէր, ուրախութիւն, խաղաղութիւն, համբերութիւն, խոնարհութիւն (Պղ 5.22-23): Իրենց ամբողջ կեանքին ընթացքին անոնք Տիրոջ մասին վկայութիւն տուած են, ըսելով թէ ինչքան սէր ունի Ան մարդոց նկատմամբ:

Աստուած կ'ուզէ որ մենք բոլորս ալ սուրբ ըլլանք:

եւ տէր տէրանց փրկիչ գոլով:

Շնորհք բարի յերուսաղէմ երեւցաւ հեթանոսաց. զի արարիչն յաւիտենից տղայ եղեալ յորդեգրութիւն կենաց կոչէ. աստուած աստուծոց եւ տէր տէրանց փրկիչ գոլով:

Միշտ ուրիշներուն մասին պէտք է մտածենք

Մեր շրջապատին մէջ առանձին ու հիւանդ մարդիկ շատ կարելի է գտնել: Շատ անգամ անոնք մէկը չունին որուն հետ կարենան Ս. Ծնունդ տօնել կամ նոյնիսկ տօնական ճաշ ուտել: Թերեւս անոնք այնքան աղքատ են, որ նոյնիսկ նուէրներ գնելու դրամ չունին: Մենք անպայման պէտք է յիշենք զիրենք եւ մտածենք անոնց մասին, փորձենք ժամանակ գտնել ու Ս. Ծննդեան տօները անոնց հետ անցընել՝ նուէրներ գնելով անոնց

համար: Մտածեցէ՛ք մանաւանդ այն մարդոց մասին, որոնք այդ օրերուն դուրսը ցուրտին մնացած են եւ հոգ տանող մը կ'ուզեն իրենց. հիւանդներ, բանտարկեալներ, առանձին ապրող ծերունիներ եւ որք մամուկներ: Անոնց համար բան մը ըրէք. օրինակ՝

1. Շնորհաւորական քարտեր պատրաստեցէք:
2. Գոնէ մէկ անձ մը գտէք, որ հիւանդութեան կամ ծերութեան պատճառաւ չի կրնար տունէն դուրս ելլել ու անոր այցելեցէք:
3. Օգնեցէ՛ք անոր՝ որ ձեր օգնութեան պէտք ունի: Կրնաք մաւել ծաղիկներ նուիրել անոր:
4. Եթէ կարելիութիւն ունիք, կրնաք մաւել որքանոց կամ հիւանդանոց ալ այցելել:

Ստեփանոս Նախավկայ

Սուրբ Ստեփանոս նախավկան առաջին դարուն ապրած քրիստոնեայ է՝ առաջին նահատակը, որ իր արիւնը թափեց Յիսուս Քրիստոսը Աստուծոյ Որդի դաւանելուն համար: Յիսուսի 72 աշակերտներէն մէկն էր ան, որ իր վեց ընկերներուն հետ Պետրոս առաքեալ առաջին եկեղեցւոյ սուրբ սեղանին սպասաւոր կարգեց: Ս. Ստեփանոսի մասին Ս. Գիրքը կ'ըսէ, որ ան աստուածային «շնորհքներով ու զօրութեամբ» լեցուած էր, «...ծողովուրդին մէջ զարմանալի գործեր եւ մեծ հրաշքներ կը գործէր» (Գրծ 6.8): Ան Սուրբ Զօգիին զօրութեամբ լեցուած կը քարոզէր Յիսուս Քրիստոսը, որուն հետեւանքով արտասահմանէն եկած հրեաները, Երուսաղէմացի ժողովուրդը, քահանայապետներն ու օրէնսգէտները գրգռեցին սուրբին դէմ, որոնք զայն բարձրագոյն ատեանին յանձնեցին: «Եւ սուտ վկաներ բերին, որոնք կ'ըսէին՝ “Այս մարդը անդադար կը հայիոյէ սուրբ տեղին ու օրէնքին դէմ”»: «...Եւ բոլոր անոնք որոնք նստած էին ատեանին մէջ, անոր նայելով տեսան, որ անոր դէմքը հրեշտակի կը նմանէր» (Գրծ 6.13-15): Պատասխանելով իրեն ուղղուած այս զրպարտութեան, Ստեփանոս Նախավկան ատեանին մէջ սկսաւ Սուրբ Զոգիով մեկնել Զին Կտակարանը, ըսելով թէ հին մարգարէներ արդէն վկայած են Արդարին՝ Մեսիային՝ Յիսուս Քրիստոսի գալուստին մասին: Ու եզրափակելով իր խօսքը՝ կ'ըսէ. «Ձեր հայրերը մարգարէներէն ո՞ր մէկը չհաւածեցին: Անոնք սպաննեցին բոլոր անոնց, որոնք սկիզբէն իսկ պատմեցին Արդարին գալուստին մասին, զոր մատնողն ու սպաննողը դուք եղաք, դուք՝ որ հրեշտակներու հրամանով օրէնքը ստացաք, սակայն զայն չգործադրեցիք» (Գրծ 7.52-53):

Ստեփանոս Նախավկան քարկոծած ու սպաննած են Երուսաղէմի շրջակայքը, մինչ նոյն պահուն ան ըսած է. «Ահա կը տեսնեմ երկինքը բացուած եւ մարդու Որդին Աստուծոյ աջ կողմը կանգնած» (Գրծ 7.55):

Ս. Ստեփանոսը առաջին նահատակն է, որուն արեան հեղումով ճամբան կը բացուի հետագայ դարերու բոլոր վկաներուն ու մարտիրոսներուն:

Զայ եկեղեցին Ս. Ստեփանոսի յիշատակը կը տօնէ մեծ տօներուն հետ՝ Դեկտեմբեր 25-ին կամ յաջորդ օր (եթէ Դեկտեմբեր 25-ը Կիրակի կամ պահոց օրուան հանդիպի):



ԸՆՏԱՆԵԿԱՆ միջավայրին մեջ

Ամեն օր կը տեսնենք թէ ինչպէս, միշտ փոփոխութեան մէջ է մեր ապրած այս աշխարհը. փոքրերը կը մեծանան՝ այսինքն մենք կը փոխուինք: Մեր կարողութիւնները կը զարգանան, նոր պարտականութիւններ կը դրուին մեր ուսերուն եւ դժուար հարցեր լուծելու հարկադրանքին տակ կը գտնուինք յաճախ: Երբեմն մեր մէջ կը յայտնաբերենք այնպիսի կարողութիւններ, որոնց մասին նախապէս բնաւ չենք մտածած, ու նոյնիսկ չէինք երեւակայեր նման կարողութիւն մը մեր մէջ:

Մովսէս մարգարէն ոգեշնչող տիպար մըն է ամբողջ մարդկութեան համար: Աստուած անոր տուաւ մարդոց օգնելու եւ հրաշքներ գործելու մեծ շնորհք եւ իսկական հաւատքով օժտեց զայն:

Ձեր հարազատներուն հետ խօսեցէք Աստուծոյ Մովսէսին տուած միւս առաքելութիւններուն մասին:

Մովսէս չէր համոզուած որ ինք կրնայ կատարել Աստուծոյ ուզածը: Սկիզբը ան շուարեցաւ եւ տկարու-

թիւն ցոյց տուաւ, բայց իբրեւ ժողովուրդին իսկական առաջնորդը, ան իր հաւատքով կրցաւ հանդարտեցնել կասկածամիտները եւ զանոնք անցուց Կարմիր Ծովէն: Մտածեցէք նաեւ, թէ ի՞նչ ըրաւ Մովսէս եւ մենք ի՞նչ կրնանք ընել, որպէսզի Աստուած օգնէ մեզի մեր մէջէն գտնելու համար նոր կարողութիւններ: Ի՞նչ դժուարութիւններ պէտք է յաղթահարէր Մովսէս, որպէսզի ժողովուրդին առաջնորդը դառնար: Ան ինչպէ՞ս փաստեց ժողովուրդին եւ փարաւունին, որ Աստուած իր հետ է: Մենք ինչպէ՞ս կրնանք Աստուծոյ օգնութիւն խնդրել մանաւանդ այն պահերուն, երբ ինքնավստահութեան պակաս ունինք, կամ մեզմէ սպասուածը ամբողջութեամբ չենք կրնար կատարել: Ինչ վիճակի մէջ ալ որ գտնուինք մեր կեանքին ընթացքին, կրնանք Աստուծոյ խնդրել որ մեզի ցոյց տայ թէ ի՞նչ է իր կամքը: Եւ կրնայ ըլլալ որ Մովսէսի նման մենք ալ կարենանք անկարելիին կարելի դարձնել, կամ անիրականանալի բան մը իրականութեան վերածել:

Փրկչին սրբապատկերները (Բ. Մաս)



Փրկչին պօրութիւնները

Ընդհանրապէս Աստուած գահին վերայ նստած գծած են: Յիշեցէք 1268 թուականի ձեռագրին մէջի մանրանկարը, որ երկրորդ գալուստը կը պատկերացնէ, որուն հեղինակն է Թորոս Ռոսլինը: Քրիստոսին պատկերը, իր փառապանծ գալուստով սերտօրէն կ'առնչուի Վերջին Դատաստանի գաղափարին հետ, որովհետեւ Աստուած այս մանրանկարին մէջ գծուած է իբրեւ մեռելներու եւ ողբերու դատաւոր: Գահին վրայ նստած է ան, Քերովքներով՝ վերին՝ հրեշտակային ոյժերով շորջապատուած: Ձախ ձեռքին Աւետարան մը բռնած է, իսկ աջով ալ մեզ կ'օրհնէ:

ԱՆԱՊԱՏԻՆ ՄԷՋ՝ ԱՍՏՈՒԾՈՅ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՄԲ

Դաս 15

*«Երեկոյեան միս կերէք,
Իսկ երեկոները հացով պիտի կշտանաք
եւ պիտի զիտնաք որ Ես եմ ձեր Տէր Աստուածը»*



Անապատին մէջ՝ Աստուծոյ առաջնորդութեամբ

Աստուծոյ վստահիլ

Իսրայէլի որդիները արդէն ազատագրուած էին: Անոնք փախուստ տուին եգիպտացիներուն ձեռքէն եւ ուղղուեցան դէպի այն երկիրը, զոր Աստուած խոստացած էր իրենց: Անոնք ուրախութեամբ կ'երգէին այն երգը, որուն մէջ կը պատմուէր ծովէն անցնիլը, թշնամիներուն իրենց ետին մնալն ու ջուրին մէջ խեղդուիլը: Սակայն Աստուած դէպի ո՞ր կ'առաջնորդէր զիրենք: Ամէն կողմ անապատ էր, միայն ամպի ու կրակի սիւները կային զիրենք առաջնորդող: Կը բաւէր միայն Աստուծոյ ապաւինիլ ու հաւատալ որ Ան չի լքեր զիրենք եւ ցոյց կու տայ այն ճամբան՝ ուր պէտք է երթան:

Լեղի ջուր

Երեք օր եղած էր, որ ժողովուրդը կիզիչ արեւուն տակ կը քալէր անապատի աւազներուն վրայէն: Ամէն կողմ անապատ էր եւ կանանչութիւն բնաւ չկար: Ճամբու ընթացքին բնակչութիւն չկար, ոչ ալ թուփեր՝ ուր կարենային հանգստանալ, կերակուր ուտել կամ ջուր առնել: Այն վրանները, զոր կը լարէին, քիչ մը կը պաշտպանէին զիրենք արեւէն, սակայն, արդէն սպառելու վրայ էին իրենց ջուրի պաշարները ու ծարաւը աւելի պիտի սաստկանար: Մարդոց շրթունքներն ու լեզուն սկսած էին չորնալ ու բորբոքիլ: Ջուր պէտք էր, որպէսզի անոնք ողջ մնային: Անոնք Մեռա հասան, ուր ջուրի աղբիւր մը կար, բայց չկրցան ջուրը խմել որովհետեւ լեղի էր:

«Մեռա» կը նշանակէ լեղի: Եւ ժողովուրդը սկսաւ բարկանալ Մովսէսին վրայ, ըսելով թէ ի՞նչ պիտի խմենք: Մովսէս դարձեալ դիմեց Աստուծոյ: Աստուած Մովսէսին փայտ մը ցոյց տուաւ եւ հրամայեց որ զայն ջուրին մէջ նետէ: Այդ ընելէն ետք, լեղի ջուրը մեղրի պէս քաղցրացաւ: Ապա, Աստուած զանոնք եղիմ առաջնորդեց, ուր 12 աղբիւրներ կային եւ արմաւենիներու հովիտ մը: Հոն ժողովուրդը քիչ մը հանգստացաւ:

Անապատային ճամբորդութիւն

Եղիմի մէջ հանգիստ ընելէ ետք, ժողովուրդը դարձեալ ճամբայ ելաւ: Ուր որ ալ հասան, բաւարար ուտելիք չգտան: Ու դարձեալ սկսան տրտնջալ եւ դժգոհիլ. «Աւելի լաւ կ'ըլլար որ Տիրոջ հարուածներուն զոհ երթայինք եգիպտացիներուն երկրին մէջ, ուր միսով լեցուն կաթսաներուն քով կը նստէինք ու կուշտ էինք, քան թէ այս անապատին մէջ, ուր բերիք ժողովուրդը սովամահ ընելու համար»:

Երկնային հաց

Այն ատեն Աստուած Մովսէսին ըսաւ. «Ահա ես ձեզի հաց պիտի տամ երկինքէն...», եւ Տէրը ըսաւ որ պէտք է զայն հաւաքեն այնքան՝ որքան պէտք է մէկ օր ուտելու համար: Այդպիսով ան ուզեց փորձել իսրայէլացիները ու տեսնել որ կ'ենթարկուի՞ն իր օրէնքներուն, թէ ոչ: Երեկոյեան լորամարգիներ եկան ու իրենց բնական տեղը թափուեցան ու ժողովուրդը որսաց զանոնք եւ միսը բոլորին բաւեց: Առաւօտուն երբ ցօղը վերացաւ, ժողովուրդը ամէն տեղ սպիտակ սերմի նման բաներ տեսաւ, իսկ երկրի վրայ ալ՝ եղեամի նմանող բան մը: Տակաւին այդպիսի բան չէին տեսած, ուստի շատ զարմացան. Մովսէս ըսաւ. «Տէրը պատուիրած է, որ իւրաքանչիւր անձ մէկ օրուան ուտելու չափ հաւաքէ անկէ, իր ընտանիքի անդամներուն թիւին համաձայն»: Տէրը պատուիրած էր, որ իրենց հաւաքածը մինչեւ յաջորդ օր չպահեն:

Այդ հացը մանանայ կոչեցին. անիկա ճերմակ էր, սերմի պէս, իսկ համը մեղրի պէս էր: Աստուծոյ պատուէրը լսելով հանդերձ, ոմանք չհաւատացին եւ միւս օրուան համար անկէ պահեցին, սակայն յաջորդ օր անիկա որդնոտեցաւ: Ինչ որ գետին թափած էին՝ արեւուն ճապարջներէն հալեցան:


Շաբաթ օր

Եւ Աստուած հրամայեց, որ շաբթուան 6-րդ օրը, երկու օրուայ համար մանանայ հաւաքեն ու եօթներորդ օրուան համար հաւաքուած ուտելիքը չփճացաւ: Աստուած պատուիրեց, որ ժողովուրդը եօթներորդ օրը չաշխատի, այլ զայն Աստուծոյ նուիրէ: Սակայն, ոմանք մտիկ չընելով, դուրս ելան մանանայ հաւաքելու, սակայն չգտան: Եւ Աստուած Մովսէսին ըսաւ. «Մինչեւ ե՞րբ մտիկ պիտի չընէք եւ չգործադրէք իմ պատուիրաններս եւ նկատի չառնէք իմ օրէնքներս»:

Մովսէս ժողովուրդին ըսաւ. «Տէրը Շաբաթ օրը տուաւ ձեզի իբրեւ հանգիստի օր: Ատոր համար ալ վեցերորդ օրը երկու օրուան բաւելու հաց տուաւ, ըսելով. “Եօթներորդ օրը ձեզմէ իւրաքանչիւրը իր տունը թող նստի եւ տունէն դուրս չելլէ”»:

Մովսէս Ահարոնին ըսաւ. «Ոսկիէ սափոր մը առ, անոր մէջ մանանայ լեցուր ու Աստուծոյ առջեւ դիր...»: Եւ Ահարոնը կատարեց ըսածը, որ Աստուած պատուիրած էր Մովսէսին: Եւ այդպիսով, Իսրայէլի որդիները քառասուն տարի մանանայ կերան անապատին մէջ, մինչեւ որ Քանանի երկրին մօտեցան:

Մարդիկ ի՞նչ կ'ուտեն Սուրբ Գրական ժամանակաշրջանին



Մեզի ծանօթ է արդեն, որ հին ժամանակ ճամբորդութիւն կատարելը դիրին չէր: Դժուար է մանաւանդ ճամբորդութեան ատեն ուտելիք գտնելը: Հակառակ անոր որ մարդիկ ընդհանրապէս տան մէջ կը մնային, սակայն իրենց կերակուրները այսօրուան հետ բաղդատած՝ շատ աւելի համեստ էին: Իր ընտանիքը կերակրելու համար մարդ մը շատ ընդարձակ հող պէտք է մշակէր ու մեծ քիւով հօտ պէտք է ունենար: Այդ իսկ պատճառով անոնք կը նախընտրէին ջուրի մօտիկ ապրիլ, որպէսզի դիրին ըլլար հող մշակելն ու անասուն խնամելը:

Սուրբ Գիրքէն գտէք հետեւեալ հատուածները եւ փորձեցէք հարցումներուն պատասխանել: Ապա, կողքի սիւնակին մէջ գրեցէք այն կերակուրի տեսակները որոնք կ'ուտէին հին մարդիկ:

1. (ԾՆ 18.1-10) Աբրահամն ու Սառան իրենց հիւրերուն կերակուր պատրաստեցին: Որո՞նք էին այդ հիւրերը եւ ի՞նչ լուր բերին անոնք:

Աբրահամն ու Սառան ի՞նչ կերակուր պատրաստեցին իրենց հիւրերուն համար: →

2. (ԾՆ 25.29-34) Ի՞նչ կերակուր տուաւ Յակոբ իր նսաւ եղբօր, անոր անդրանկութիւնը խլելով: →

3. (ԾՆ 43.11-15) Հայրը նուէրներ դրկած էր Եգիպտոս՝ յայտնի մէկու մը տրուելու համար:

Ո՞վ էր հայրը: →

Ո՞վ ստացաւ այդ նուէրները: →

Ի՞նչ ուտեստեղէնի տեսակներ կը դրկուէին իբր նուէր: →

4. (Ել 12.3, 8-10) Ջատկի օրը հրեաներ ի՞նչ կ'ուտէին: Ինչպէ՞ս կը պատրաստէին այդ ուտելիքը: →

Ի՞նչ բան արգիլուած էր ընել անոր հետ: →

5. (Ել 15.23-25, 27, 16.4, 13-16, 31) Ի՞նչ կերակուր դրկեց Աստուած անապատին մէջ եղող մարդոց: →

6. (Թւ 20.5) Ի՞նչ կ'ուտէր ժողովուրդը երբ Եգիպտոսի մէջ էր, մինչեւ անապատ երթալը: Ձեր ցուցակին մէջ գրեցէք այդ ուտելիքներուն ցանկը:

ՅԻՇԵՆՔ ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ ՆԱՅԱԴԵՏՆԵՐԸ

Գտեք այն նախահայրերուն անունները, որոնց հանդիպած ենք մեր նախորդ դասերուն մէջ:

1. Նախահայրերուն անունները:
2. Անունները անոնց՝ որոնք Աբրահամէն առաջ կ'ապրէին:
3. Անունները ձեր միտքը մնացած մարգարէներուն:
4. Ո՞վ «Աստուծոյ Բարեկամ» կոչուած է:

5. Ո՞վ էր մեր առաջին հայրը:

6. Ո՞վ ցօղը վերածեց ուտելիքի:

Հիմ Կտակարանի մահապետներուն մուկրուած տօներ եւ շարականներ

Հայ Առաքելական Եկեղեցին, Վարդավառին յաջորդող երկրորդ Կիրակիէն ետք եկող Հիմգշաբթի օրը կը տօնախմբէ Սուրբ Նախահայրերուն (Նահապետներուն)՝ Ադամի, Աբելի, Սէթի, Ենոքի, Ենովքի, Նոյի, Մելքիսէդէկի, Աբրահամի, Իսահակի, Յակոբի, Յովսէփի, Մովսէսի, Ահարոնի, Եղիազարի, Յեսուի, Սամուէլի, Սամսոնի, Բալակի, Գեղէօնի եւ այլ նահապետներուն տօնը:

Հայ Եկեղեցին Քրիստոսի Սուրբ Ծննդեան եւ աստուածայայտնութեան տօնէն առաջ, Դեկտեմբերի երրորդ տասնօրեակին կը տօնէ մեծ տօները՝ Սուրբ Դաւիթ Մարգարէին եւ Յակոբ Տեառնեղբայր առաքելին, Սուրբ Ստեփանոս նախապկային եւ առաջին մարտիրոսին, Սուրբ Պետրոս եւ Պօղոս առաքելներուն, Սուրբ Որոտման Որդիներուն՝ Յակոբ առաքելին եւ Յովհաննէս Աւետարանիչին տօները: Այս տօներուն կը յաջորդէ Ս. Ծննդեան շաբաթապահը: Ահաւասիկ հատուած մը այն շարականէն որ մուկրուած է նահապետներուն.



Առ քեզ աստուած Հարցն մերոց խոնարհեալ անձամբք պաղատիմք. մի անտես առներ տէր, որ փառաւորեալդ ես յաւիտեան:

Յիշեա զուխտն Աբրահամու, զՍահակայ եւ զՅակոբայ. եւ զնեղելոց անձանց պաղատանս. մի անտես առներ տէր, որ փառաւորեալդ ես յաւիտեան:

Շնորհեա տէր խնդրողացս ի քէն ըզթողութիւն մեղաց, ի տաճարի քում սրբութեան, բարեխօսութեամբ սրբոց քոց. որ փառաւորեալդ ես յաւիտեան:

...Այսօր վերին զօրացն համաձայնեալք, դասք նահապետաց եւ մարգարէից, երգեն աստուծոյ զերգս հոգեւորս. ի յիշատակի սոցա երգեմք զփառս ի բարձունս:

Այսօր ցնծայ զուարճացեալ եկեղեցի հեթանոսաց, տօնելով զյիշատակ մեծի նահապետին եւ հօրն հաւատոյ Աբրահամու. օրհնեցէք մանկունք սիրովնի զհայրն լուսոյ անլուծի:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԶԳԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Շատեր կը հետաքրքրուին իրենց գերդաստանով: Որո՞նք եղած են իրենց նախահայրերը: Ո՞ր ապրած են անոնք, արդեօ՞ք այն նոյն վայրին մէջ ուր հիմա իրենք կ'ապրին, թէ՛ հեռու վայրերէ եկած են այնտեղ: Մենք կ'ուզենք մեր ծնողներու մանկութեան մասին տեղեկութիւններ ունենալ, գիտնալու համար թէ իրենք ինչպէ՞ս ապրած են իրենց ծնողներուն, մեծ հայրերուն ու մեծ մայրերուն հետ: Շատեր իրենց ընտանեկան ծառը կը պատրաստեն, գտնելով ու գրելով իրենց նախնիներուն անունները:

Յիսուս Քրիստոսի նախահայրերը

Մենք կրնա՞նք խօսիլ Քրիստոսի նախահայրերուն մասին: Ինչո՞ւ համար Մատթէոս ու Ղուկաս Աւետարանիչները Յովսէփի՝ Աստուածամօր ամուսինին անունը կը յիշեն. չէ՞ որ անիկա Յիսուս Քրիստոսի հայրը չէր: Հրեաները Յովսէփը մանուկին հայրը կը նկատէին, մովսիսական օրէնքին համաձայն: Հետեւաբար, Աստուծոյ կողմէ ու Սովսէփի ձեռքով տրուած օրէնքին համաձայն, որ կարելոր նշանակութիւն ունէր հրեաներուն համար, Քրիստոս ինքզինք կրնար Յովսէփի նա-

խահայրերուն ժառանգորդ նկատել: Ուրիշ կարծիքի մը համաձայն, Ղուկաս կ'արձանագրէ Մարիամ Աստուածամօր գերդաստանին անունները: Սուրբ Ծննդեան ճրագալոյցի պատարագի ընթացքին Յիսուս Քրիստոսի ազգաբանութիւնը կը կարդացուի: Ընդգծեցէք այն անունները, որոնց չէք հանդիպած նախորդ դասերուն մէջ.

**Աբրահամ
Իսահակ
Յակոբ
Յուդա
Հովսէփ
Յեսսէ**

**Դաւիթ
Սողոմոն
Մամատ
Ամովս
Ովսիա
Յովսէփ**

Աւետարանէն կարդացէք հետեւեալ հատուածը (Ղկ 2.23-38): Այս աւետարանին մէջ ներկայացուած ազգաբանութիւնը քիչ մը տարբեր է Մատթէոսի ներկայացուցածէն, ու կ'երթայ մինչեւ Ադամ: Դաւիթ թագաւորէն սկսեալ թագաւորական կը դառնայ ընտանիքը, այդ իսկ պատճառով շատ յաճախ Յիսուս Քրիստոսը կը կոչեն թագաւորական սերունդ:

Ընտանեկան միջավայրին մէջ

Յեսսէն Յիսուսի նախահայրերէն մէկը եղած է: Եսայի մարգարէն ըսած է, որ Մեսիան «Յեսսէի արմատէն պիտի ծաղկի»: Մարգարէն կը նշէ նաեւ, որ Սուրբ Դոգին պիտի իջնէ անոր վրայ, ու խմաստութեամբ պիտի լեցուի ան: Որո՞ւ նկարագրութիւնը կ'ընէ մարգարէն: Որո՞ւ մասին կը խօսի Եսայի այստեղ: Եսայի մարգարէի գիրքէն կարդացէք (11.1-2) եւ Ղուկասի աւետարանէն (3.14-15, 18):

Յեսսէի արմատը

Կարգ մը մանրանկարներու մէջ Յիսուսի ծագումին ու գերդաստանին պատկերները կը գտնենք: Երբեմն մանրանկարները հսկայ ծառ մը կը ներկայացնեն բազմաթիւ ճիւղերով, որոնց վրայ առանձին շրջանակներու մէջ գծուած են Հին Կտակարանեան նախահայրեր, իսկ ծառին գլուխը դրուած կ'ըլլայ Յիսուս Քրիստոսի սրբապատկերը: Նման պատկերները երբեմն «Յեսսէի արմատ» կոչուած են:

1. Խաւաքարտով կլոր շրջանակներ կտրեցէք եւ մետալներ պատրաստեցէք անոնցմով:
2. Մետալներուն վրայ Տիրոջ նախահայրերուն անունները գրեցէք: Ծայրերէն օղակներ շինեցէք ու կախեցէք սօսենիի ճիւղերուն: Չմոռնաք Յեսսէին նկարը: Իսկ ճիւղին ամէնէն վերը դրէք Յիսուս Քրիստոսի սրբապատկերը:
3. Թուղթով գեղեցիկ օղակներ պատրաստեցէք եւ բոլոր մետալները իրարու անցուցէք:



ԸՆՏԱՆԵԿԱՆ միջավայրին մեջ

Ամեն մարդ ծնողք եւ նախահայրեր ունի: Մենք ոչ միայն անոնց կարողությունները կը ժառանգենք, այլ նաեւ անոնց իւրայատկությունները: Վատ գաղափար չէ ծանօթանալ Յիսուս Քրիստոսի ազգաբանութեան: Աբրահամը Աստուծոյ կողմէ ընտրուած էր, իսկ անոր սերունդները պէտք է միշտ ուխտ կնքէին Աստուծոյ հետ: Իբրեւ Դաւիթ թագաւորի ժառանգորդ, Յիսուս թագաւորական տոհմի գաւազէն էր: Ան մեզի պէս մարդ եղաւ, ամեն ինչով՝ բացի մեղքէն, որ մեզի յատուկ է: Յիսուսի մեջ եղած մարդկային արժանիքները պէտք է ու-


սումնասիրենք լաւապէս:

Ձեր ծնողներուն հետ խօսեցէք նախահայրերուն մասին: Ուրկէ՞ եկած է ձեր մականունը: Արդեօք մեր նախնիներուն հետ որեւէ արտաքին մանկություններ ունի՞նք. օրինակ՝ մազերուն գոյնը, աչքերուն ձեւը, հասակը: Հոգեկան յատկանիշներ փոխանցուա՞ծ են ձեզի ձեր նախնիներէն: Ի՞նչ սովորություններ կան ձեր ընտանիքէն ներս, որոնք հիմէն կու գան ու տակաւին կը շարունակուին:

Փրկչին սրբապատկերները (Գ. Մաս)

Տէր Ամենակալ

Հայկական աւանդութեան համաձայն, թագաւորներն ու իշխանները միայն գեղեցիկ ու նկարագարողըւած ձեռագիր աւետարաններ ընդօրինակել կու տային: Այդպիսի Աւետարանի մը վերջին էջին վրայ գծուած կը գտնենք Ամենակալ Քրիստոսը, իրեն ընծայուած Աւետարան մը ձեռքին բռնած: Ահա օրինակ մը, ուր Կիլիկիոյ Լեւոն Բ. Թագաւորը, Կեռան թագուհին եւ անոնց հինգ զաւակները Ամենակալ Քրիստոսի առջեւ ծնրադիր՝ կը խնդրեն որ ընդունի իրենց նուէրը:



ԱՍՏՈՒԾՈՅ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐԸ ԵՒ ԱՆՈՆՑ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Դաս 16

Եւ Աստուած անոր ըսաւ. «Եթէ մտիկ ընէք իմ խօսքերս եւ հաւատարիմ ըլլաք իմ դրած ուխտիս, այն ապէն բոլոր ապգերուն մէջէն, դուք իմ ընտրեալ ժողովուրդս կ'ըլլաք... Դուք քահանայութեան թագաւորութիւն կ'ըլլաք ինձի, որպէս աւորք ապգ մը»



Աստուծոյ պատուիրանները եւ անոնց գործադրութիւնը

Եգիպտոսէն դուրս ելլելէ երեք ամիս ետք, Իսրայէլի որդիները բարձր լերան մը ստորոտը հասան՝ Սինայի անապատը: Իսրայէլի ժողովուրդը անապատին մէջ տեղաւորուեցաւ, իսկ Մովսէս լեռ բարձրացաւ եւ սկսաւ աղօթել:

Աստուծոյ ընտրեալ ժողովուրդը

Եւ Տէրը Մովսէսին ըսաւ. «Դուք տեսաք թէ ինչ ըրի եգիպտացիներուն, իսկ ձեզ արծիւի պէս թեւերուս վրայ առնելով՝ իմ մօտս բարձրացուցի: Ուրեմն, եթէ մտիկ ընէք իմ խօսքս եւ հաւատարիմ ըլլաք իմ Ուխտիս, բոլոր ազգերուն մէջէն դուք իմ ընտրեալ ժողովուրդս կ'ըլլաք, որովհետեւ ամբողջ երկիրը ինծի կը պատկանի: Դուք ինծի համար թագաւորութիւն կ'ըլլաք, որպէս քահանայութիւն եւ որպէս սուրբ ազգ մը: Այս ըսածներս փոխանցէ՛ իսրայէլացիներուն»:

Ժողովուրդին նախապատրաստութիւնը

«Ահա ես քեզի պիտի մօտենամ ամպի սիւնին մէջէն, որպէսզի ժողովուրդը լսէ թէ ինչ պիտի ըսեմ քեզի, եւ ան յաւիտենապէս պիտի հաւատայ քեզի... Մաքրէ՛ զանոնք այսօր ու վաղը, իրենց զգեստները թող լուան, որպէսզի երրորդ օրը պատրաստ ըլլան»:

Եւ ժողովուրդը Աստուծոյ ըսածին պէս ըրաւ, այնպէս ինչպէս ըսած էր Մովսէսին: Ժողովուրդը երկու օր աղօթեց եւ պահեցողութիւն ըրաւ, որպէսզի Աստուծոյ հետ հանդիպման պատրաստուի:

Աստուած Սինա լեռ կ'իջնէ՝ Մովսէսին քով

Երրորդ օրը, առաւօտեան արեւածագին, կայծակ ու որոտում եղաւ, մշուշապատ ամպ մը երեւցաւ. փողի ձայնը զօրաւոր կը լսուէր: Ամբողջ ժողովուրդը վախեցաւ: Սինա լեռը կը ծխար, որովհետեւ Աստուած հոն իջած էր իբրեւ կրակ:

Եւ Աստուած իջաւ լերան գագաթը, սակայն ժողովուրդին արգիլուեցաւ հոն բարձրանալ, որովհետեւ այդ լեռը սուրբ էր: Եւ Աստուած իր մօտ կանչեց Մովսէսը, որ իր մօտ բարձրացաւ ու ամպին մէջ կեցաւ: Մովսէս հոն մնաց 40 օր ու 40 գիշեր, առանց բան մը ուտելու: Աստուած Մովսէսին տուաւ իր պատուիրանները, որպէսզի ժողովուրդին սորվեցնէ զանոնք:

Աստուծոյ պատուիրանները

Եւ Աստուած անոր ըսաւ.

1. Ես եմ քու Տէր Աստուածդ, ինձմէ զատ ուրիշ աստուածներ չունենաս:
2. Վերը՝ երկինքին մէջ, վարը՝ երկրի վրայ, ջուրերուն մէջ եղած որեւէ բանի նմանող կուռքեր չշինես:

3. Քու Տէր Աստուծոյդ անունը պարապ տեղ թերանդ չառնես:

4. Շաբաթ օրը յիշէ ու զայն սուրբ պահէ. վեց օր աշխատի՛ր եւ քու բոլոր գործերդ կատարէ, իսկ եօթներորդ օրը Տէր Աստուծոյդ նուիրէ:

5. Պատուէ՛ քու հայրդ ու մայրդ, որպէսզի յաջողիս:

6. Մի՛ սպաններ:

7. Մի՛ շնար:

8. Մի՛ գողնար:

9. Դրացիիդ մասին սուտ վկայութիւն մի՛ տար (պէտք չէ մէկը խաբել, դատել կամ զրպարտել):

10. Մի՛ նախանձիր ուրիշներուն ունեցածին:

Եւ երբ Աստուած վերջացուց իր խօսքը Մովսէսի հետ Սինա լերան վրայ, անոր տուաւ վկայութեան երկու տախտակները, որպէսզի մարդիկ բնաւ չմոռնան զանոնք:

Աստուծոյ պատուիրանները անխախտ օրէնքներ են իւրաքանչիւր մարդու համար, որոնք պարտաւոր են զանոնք գործադրել թէ՛ Աստուծոյ եւ թէ՛ ուրիշներու նկատմամբ, որպէսզի արդար կեանք մը ապրին ու չմեղանչեն: Եթէ մարդիկ Աստուծոյ պատուիրանները չգործադրեն, իրենց ամբողջ կեանքը կը փճանայ, ու վայրի գազաններէն աւելի վայրենի կը դառնան իրարու հանդէպ: Իսկ անոնք որոնք գործադրեն Աստուծոյ պատուիրանները, սիրելի կը դառնան Աստուծոյ: Եւ Աստուած կ'օրհնէ անոնց բոլոր գործերը:

Ժողովուրդը ոսկիէ հորթին կ'երկրպագէ

Մովսէս երկար օրերով մնաց լերան վրայ եւ ժողովուրդը սկսաւ մտահոգուիլ լուր մը չունենալով անկէ, թէ ի՞նչ եղաւ: Եւ սկսած էին մտածել որ ալ պիտի չվերադառնայ. այդ իսկ պատճառով սկսան իրենց համար Աստուած մը չինել, որպէսզի զիրենք պաշտպանէ ու առաջնորդէ: Այդ նպատակով անոնք իրենց ունեցած ոսկին հաւաքեցին եւ ոսկիէ հորթ մը շինեցին ու սկսան պաշտել զայն: Եւ ըսին. «Ահաւասիկ մեր աստուածը, որ մեզ եգիպտացիներուն երկրէն դուրս հանեց»: Անոնք զոհեր ալ կը մատուցանէին իրենց կուռքին ու անոր շուրջը դառնալով կը պարէին ու կ'ուրախանային: Այն ատեն Տէրը Մովսէսին ըսաւ. «Շուտ ըրէ՛, վար իջիր այստեղէն, որովհետեւ ժողովուրդը սկսաւ չարանալ»: Եւ երբ Մովսէս իջաւ ժողովուրդին մօտ ու տեսաւ հորթն ու խրախճանքը՝ սաստիկ զայրացաւ, իր ձեռքէն վար նետեց Աստուծոյ տուած քարէ տախտակները եւ լերան ստորոտին փշրեց զանոնք, ապա անոնց շինած հորթը առնելով՝ կրակին մէջ նետեց ու այրեց: Մովսէս իր ժողովուրդին ըսաւ. «Դուք մեծ մեղք մը գործեցիք»: Սակայն, Մովսէս նաեւ կը խղճար անոնց, որովհետեւ

կը սիրէր իր ժողովուրդը: Եւ ան դարձեալ լեռ բարձրացաւ աղօթելու, որպէսզի Աստուած ներէ իր ժողովուրդին մեղքերը: Եւ գթասիրտ ու համբերատար Աստուած ներեց իր ժողովուրդին եւ Մովսէսին պատուիրեց պատուիրաններու մոր տախտակներ ամռել ու վերադառնալ ժողովուրդին քով: Եւ երբ Մովսէս իջաւ Սինա լեռէն ձեռքին վկայութեան տախտակները բռնած, անոր դէմքէն լոյս կը ճառագայթէր, որովհետեւ Աստուած իր հետ խօսած էր: Ապա, Աստուած Մովսէսին յանձնարարեց պաշտամունքի յատուկ տեղ մը յատկացնել, ուր ինք ալ պիտի այցելէր: Հոն պէտք էր դրուէին սրբութիւնները եւ ուր ժողովուրդը պիտի հաւաքուէր: Այնտեղ մարդիկ միասնաբար Աստուծոյ պիտի երկրպագէին ու աղօթէին՝ երախտագիտութիւն յայտնելով այն բոլոր բարիքներուն համար, որ Ան ըրած է իրենց:

Իսրայէլի ժողովուրդը թափառական էր, ատոր համար վրանով տաճար մը չիւնց: Մովսէս այդ վրանը լարեց ժողովուրդի բնակութենէն քիչ մը հեռու, եւ զայն կոչեց Վկայութեան խորան: Եւ ով որ Տէրը կը փնտռէր՝ հոն կ'երթար:

Առաջին տաճարը՝ Վկայութեան խորանը

Եւ բոլորը հոն կ'երթային, ամոնց որոնց սիրտը կ'առաջնորդէր զիրենք, որոնց հոգին կը թելադրէր երթալ ու նուէրներ կը բերէին Տիրոջ՝ Վկայութեան խորանին, ինչպէս նաեւ քահանայական զգեստներու պատրաստութեան համար անհրաժեշտ պիտոյքներ: Ատկէ զատ, եթ պէտք ըլլար, ամէն մարդ Աստուծոյ ոսկի ու արծաթ կը նուիրէր, կաշի, կապոյտ, կարմիր կտաւներ, թանկարժէք քարեր, ձէթ՝ ջահերուն համար, խնկարկութեան միւթեր, եւ այլն:

Աստուած պատուիրեց սրբութեամբ գործադրել տասը պատուիրանները խորհրդանշող քարէ տախտակները: Իսրայէլացիները թանկարժէք քարով գեղեցիկ տուփ մը շինեցին, զանոնք մէջը դնելու համար: Այդ տապանակին կափարիչին վրայ ոսկիէ երկու քերովքներ դրին: Կողմերէն երկար փայտեր ունէր, որպէսզի կարելի ըլլար զայն տեղափոխել: Տաճարին գլխաւոր մասին մէջ դրին զայն, որ «Սրբութիւն Սրբոց» կը կոչուէր եւ վարագոյրով ծածկեցին, որուն վրայ քերովքներուն պատկերները հիւսուած էին: Ոչ ոք իրաւունք ունէր Սրբութիւն Սրբոց մտնել: Խորանին միւս մասը, ուր քահանաներ միայն իրաւունք ունէին մտնելու, աջ կողմը ունէր առաջադրութեան սեղանը, որուն վրայ կը դրուէին Տիրոջ մատուցուած 12 հացերը: Վարը կար ոսկեայ աշտանակը՝ եօթը ճիւղերով, իսկ մէջտեղը ոսկեպատ սեղանը՝ խնկարկութեան համար: Խորանին վրայ ուրիշ սեղան մըն ալ կար, պղինձէ շինուած զոհասեղան մը, որուն վրայ զոհերը կը մորթուէին: Կար նաեւ լուացու-

լու տեղ մը, ուր քահանաները իրենց ձեռքերն ու ոտքերը կը լուային: Ամէն մարդ իր կարողութեան չափով կը մասնակցէր խորանին շինարարութեան: Կիները բուրդ կը մանէին, կը հիւսէին եւ ձեռագործներ կը պատրաստէին: Երկու ճարտար արուեստագէտներ՝ Բեսելիէլ եւ Եղիաբ, Աստուծոյ հոգիով լեցուած, ոսկիի ու արծաթի, ինչպէս նաեւ փայտի ու նկարչական աշխատանքը կը կատարէին՝ ուրիշներուն ալ սորվեցնելով, որպէսզի ամէն մարդ կարենար իր տուրքը մատուցել Աստուծոյ փառքին: Իւրաքանչիւր մարդու ձգտումն էր տապանակն ու տաճարը գեղեցիկ դարձնել, Աստուծոյ ու մարդոց ուրախութիւն պատճառելու համար:

Աստուած կ'այցելէ խորանը

Ի վերջոյ, ամէն ինչ պատրաստ էր եւ Մովսէս սրբագործեց Տիրոջ առաջին տաճարը: Եւ այն ատեն ամպ մը ծածկեց խորանը եւ Տիրոջ փառքը լեցուեցաւ վառ լոյսերով: Մովսէս երկար ատեն չկրցաւ խորան մտնել, որովհետեւ աչք շլացնող լուսաւորութիւն կար ներսը: Ան գիտէր, որ Աստուած ներսն է եւ իր ժողովուրդը կ'օրհնէ: Երբ լոյսի ամպը խորանէն վեր բարձրացաւ, անոնք դարձեալ ճամբայ ելան: Եւ այդպէս, Տիրոջ ամպը ցերեկը հովանիի նման կը կենար խորանին վերեւ, իսկ գիշերը՝ իսրայէլացիներուն առջեւ անոր վրայ կրակ կը վառէր:

Յոյց տուէք այն ցուցատախտակները, որոնց վրայ Աստուծոյ պատուիրանները գրուած են.



ԴԱՄԻԷԼ ՄԱՐԳԱՐԻՆ ԵՒ ԵՐԵՔ ԲԱՐԵԱՎԱՅՏՈՒ ԱԿԱՏԱՆԻՆԵՐԸ

Դամիել մարգարեին ու երեք բարեպաշտ պատանիներուն կրակի հնոցին մէջ գտնուիլը ծանօթ է քրիստոնէական եկեղեցւոյ:

ԴԱՄԻԷԼ ԵՒ ԻՐ ԵՐԵՔ ԸՆԿԵՐՆԵՐԸ

Դամիել մարգարեին կեանքը մեզի կը յիշեցնէ Յակոբի որդին՝ Յովսէփը: Երբ Բաբելոնի թագաւորը՝ Նաբուգոդոնոսոր Երուսաղէմը գրաւեց, հրամայեց որ Իսրայէլի ամենէն գեղեցիկ պատանիները ընտրեն՝ Դամիելը, Անանիան, Միքայէլը եւ Ազարիան, ու բերեն արքունիք եւ թագաւորին ծառայել սորվեցնեն անոնց:

Թագաւորին երազը

Նաբուգոդոնոսոր թագաւոր տարօրինակ երազներ կը տեսներ ու շուարած էր: Այդ իսկ պատճառաւ, հրամայեց որ իր բոլոր իմաստունները եւ մեկնաբանները քով-քովի գան ու փորձեն մեկնել իր երազները: Սակայն անոնք չկրցան մեկնել իր երազները ու թագաւորը հրամայեց սպաննել զանոնք, ինչպէս նաեւ Բաբելոնէն եկած իմաստունները: Ու սկսան փնտռել Դամիելը եւ անոր ընկերները, որպէսզի զանոնք եւս սպաննեն: Սակայն Դամիել թագաւորէն խնդրեց որ իրեն ծամանակ տրուի, ըսելով որ ինք կրնայ մեկնել թագաւորին երազները:

ԴԱՄԻԷԼ Կը մեկնաբանէ երազը

Աստուած Դամիել մարգարեին յայտնեց երազին իմաստը: Եւ Դամիել ոչ միայն եղածին պէս երազը պատմեց թագաւորին, այլ բացատրեց թէ ի՞նչ նշանակութիւն ունի անիկա: Դամիելի տուած մեկնաբանութեան համաձայն, երազը տեսիլք մըն էր, որ ցոյց կու տար երկրաւոր բոլոր թագաւորութիւններուն կործանումը եւ երկինքի թագաւորին կողմէ յաւիտենական թագաւորութեան մը հաստատումը:

Նաբուգոդոնոսոր թագաւոր հիանալով Դամիելի իմաստութեան, հրամայեց որ զայն Բաբելոնի բոլոր իմաստուններուն մեծը կարգեն: Դամիել թագաւորին ըսաւ, որ ամենագոր Աստուած ինք ուզած է թագաւորին յայտնել այդ բոլորը եւ համեստութեամբ հրաժարեցաւ:

Իրեն տրուած նուէրներէն ու բարձր պաշտօնէն: Քրիստոսի Սուրբ Ծննդեան տօնի ճրագալոյցին՝ պատարագէն առաջ, մեր եկեղեցիներուն մէջ Դամիելի գիրքը կը կարդացուի: Եւ մենք՝ քրիստոնեաներս գիտենք, որ Քրիստոսի երկնային թագաւորութիւնն է միակ յաւիտենական թագաւորութիւնը:

Առիւծներու գութին մէջ, եւ կրակէ հնոցը

Դամիելի կարողութիւններուն նախանձողներ կային, որոնք կ'ուզէին զայն վռնտել թագաւորական պալատէն: Եւ Դամիելը մետեցին առիւծներու գութը, որովհետեւ երկնային թագաւորը աւելի բարձր կը նկատէր քան երկրաւոր թագաւորները: Այս տեսնելով, Աստուած իր հրեշտակը դրկեց, որպէսզի փրկէ Դամիելը, առիւծներուն բերանը փակելով:

Իսկ երեք բարեպաշտ պատանիները, որոնք Դամիելի ընկերներն էին, վառած հնոցին մէջ մետեցին, Նաբուգոդոնոսոր թագաւորին չհնազանդելուն եւ անոր շինած ոսկիէ արձանին երկրպագութիւն չընելուն համար: Աստուած անոնց մօտ դրկեց իր հրեշտակը, որպէսզի պատանիները փրկէ կրակէն: Ամէն տարի, նաեւ Զատիկի ճրագալոյցին՝ պատարագէն առաջ այդ պատանիներուն փառաբանութեան երգն ալ կ'երգուի:

Եւ այդպէս, Դամիելն ու իր երեք ընկերները չհրաժարեցան ճշմարիտ Աստուծմէ, նոյնիսկ մահուան երկիւղի դիմաց: Անոնք ուրախութեամբ վկայեցին Աստուծոյ վրայ իրենց ունեցած հա-

ւատքին մասին: Պատանիները չվախցան թագաւորին ըսելու ինչ որ ճշմարտութիւն էր Աստուծոյ մասին, որովհետեւ գիտէին, որ եթէ հնազանդին թագաւորին հրամանին, դաւաճանած կ'ըլլան Աստուծոյ: Աստուած փրկեց բարեպաշտ պատանիները եւ օրինեց զանոնք:

Տան պարտականութիւն

Սուրբ Գիրքին մէջ կարդացէք երեք պատանիներուն հնոց մետուելուն պատմութիւնը (ԴՆ 3.1-27) եւ զայն պատմեցէք ձեր ծնողներուն, ընկերներուն եւ ծանօթներուն:



Աստուածապաշտութիւն սորվիմք (Ա. Մաս)

ՏԱՃԱՐ (ԵԿԵՂԵՑԻ)

Եկեղեցի կը կոչուի այն կառոյցը, ուր հաւատացեալներ կը հաւաքուին Աստուած պաշտելու: Ինչպէս Հին Ուխտի Վկայութեան Խորանը, նոյնպէս ալ եկեղեցին հիմնական երեք մասերէ բաղկացած է՝ **խորան, սրահ եւ գաւիթ**:

Խորանը եկեղեցւոյ արեւելեան կողմը կ'ըլլայ: Անիկա եկեղեցւոյ ամենէն կարեւոր մասն է, ուր պատարագը կը մատուցուի: Հոն կը բարձրանան միայն եկեղեցւոյ սպասաւորները:

Սրահը բոլոր մկրտուած հաւատացեալներուն համար է, իսկ գաւիթը անոնց համար՝ որոնք տակաւին չեն մկրտուած: Սեր եկեղեցիներուն մէջ խորանը շինուած կ'ըլլայ բարձր բեմի մը վրայ, եւ երկու կողմերէն աստիճաններով կը բարձրանան այնտեղ: Խորանին վրայ տեղի կ'ունենայ Ս. Հաղորդութեան Խորհուրդը, երբ հացն ու գինին Զրիստոսի մարմնին եւ արեան կը փոխուին:

Եկեղեցւոյ սրահն ալ ունի իր բաժանումները: Անոր առջեւի մասը, բեմին ճիշդ վարը, **դաս** կը կոչուի, իսկ բուն մասը ուր նստարանները կ'ըլլան՝ հաւատացեալներուն յատկացուած մասն է: Այս մասը կրնայ նաեւ թեւեր ունե-


նալ դէպի հիւսիս եւ դէպի հարաւ ընդարձակուելով, ուր դարձեալ երբեմն խորաններ շինուած կ'ըլլան:

Եկեղեցւոյ հիւսիսային կողմը զետեղուած կ'ըլլայ **Մկրտութեան աւազանը**:

Եկեղեցին բազմաթիւ դռներ կրնայ ունենալ: Ընդհանրապէս երկրորդ մուտքը հարաւային կողմէն կ'ըլլայ: Կեդրոնական դուռը միւսներէն աւելի զեղեցիկ կ'ըլլայ, որովհետեւ անիկա կը խորհրդանշէ այն մեծ ողորմութեան դուռը, որ փակուած էր աղամական մեղքին պատճառով եւ զոր Քրիստոս բացաւ իր մարդեղութեամբ:

Եկեղեցւոյ սիւներուն եւ կամարներուն վրայ կը հանգչի գմբէթը, որ ներսի կողմէն կէս մը գնդաձեւ, իսկ դուրսի կողմէն՝ դէպի վեր սլացող վեղարի նման կառոյց մը ունի: Այսպիսի ձեւ ունեցող գմբէթները, որոնք միայն հայ եկեղեցւոյ յատուկ են, կը կոչուին **կաթողիկէ**:

Եկեղեցւոյ մուտքին քով ընդհանրապէս շինուած կ'ըլլայ **զանգակատունը**, որուն մէջ դրուած զանգերուն դօղանքները հաւատացեալները կը հրաւիրեն ժամերգութեան ու պատարագին մասնակցելու:



ԸՆՏԱՆԵԿԱՆ միջավայրին մէջ

Այս դասերուն միւթերէն մէկն ալ Աստուծոյ գալուստը սպասելու եւ անոր կամքը գործադրելու մասին է: Եւ այնքան ալ դիւրին չէ մանուկներուն բացատրել սպասման զգացումին կարեւորութիւնը: Մենք մեր կամքով ու բարոյականութեամբ կ'առաջնորդուինք միայն մեր ուզած ատեն: Սակայն մեզի համար կարեւոր են նաեւ այն դէպքերը, որոնց ակնկալութեամբ կը սպասենք: Լաւ կ'ըլլայ որ նախապատրաստուինք անոնց, մանաւանդ այն ատեն, երբ գիտենք որ գալիքը ուրախութիւն պիտի բերէ մեզի:

Տան մէջ պատմեցէք թէ ինչպէս հրեայ ժողովուրդը իր անհամբերութեան պատճառաւ (ոսկի հորթը շինողներն ու անոր երկրպագողները) կը բարկանային Մով-

սէսի վրայ, թէ ինչպէս Դանիէլն ու երեք պատանիները կրցան հաստատուն հաւատք ունենալ (նոյնիկս մահուան դէմ յանդիման գտնուելով հնոցին մէջ կամ առիւծներու վանդակին մէջ, քաջ գիտնալով որ Աստուծոյ գործերը հրաշալի են):

Մանուկները թող պատմեն թէ իրենք ինչպէ՞ս կրնան համբերել: Ի՞նչ բանի չեն կրնար համբերել (Ծննդեան տարեդարձին գալուն, քննութիւններուն, դասերուն, փոթորիկի խաղաղելուն, կամ՝ խաղի համար փողոց իջնելուն): Յիշեցէք թէ եկեղեցին ինչպէ՞ս կ'օգնէ մեզի մեծ տօներուն պատրաստուելու աշխատանքին մէջ: Միասին կարդացէք Սուրբ Ծննդեան տօներուն նախապատրաստութեան մասին խօսող գրութիւններ:

Կը պատրաստուինք Տէրը դիմաւորելու

Մենք շատ լաւ գիտենք, թէ ինչքա՞ն կարեւոր է Զատիկի նախորդող չարչարանքներու շաբաթը: Այս շաբթուան ընթացքին, իւրաքանչիւր օր յատուկ ժամերգութիւն կը կատարուի, որ մեզի կ'օգնէ անելի լաւ նախապատրաստուիլ Սուրբ Զատիկուան մեծ տօնին: Ծննդեան տօնին նախորդող ամբողջ շաբաթն ալ նոյնպէս կարեւոր է:

Ստորեւ Ս. Ծննդեան տօնին նուիրուած շարականներ տրուած են.

Լոյս ի լուսոյ ծագեալ ի հօրէ եւ լուսաւորեաց զտիեզերս. ծնունդ անապական յանըստուեր լուսոյն, զոր միշտ փառաւորեն դառը անմարմնոցն:

Յայտնի է ի հրէաստանի աստուած, եւ ի բեթղեհէմ ծնեալ յայրին մանուկ անժամանակ ի հօրէ, եւ ժամանակաւ գոյացեալ ծընեալ լինի աստուած եւ մարդ:


Քրիստոս ծնեալ այսօր ի բեթղեհէմ ի յայրին, եւ դասը վերին զուարթնոցն սոսկացեալ զարմացեալ կային. զի տեսին մարմնով ծընեալ զբանն աստուած:

...Որ անտես - անջննին քառակերպիցն վեհագոյն, ի փրկել զմեզ եկեալ անմահից թագաւորն, օրհնութիւն առաքողին:

Այս շարականներէն որեւէ մէկը զոց սորվեցէք եւ ձեր ամէնօրայ աղօթքին ընթացքին արտասանեցէք:



*«Ահա Կոյսը պիտի յղանայ եւ որդի մը պիտի ծնի,
եւ սայն Էմմանուէլ պիտի կոչեն»*



Քրիստոս ծնաւ

Մովսէսէն շատ դարեր ետք, Տէրը շատոնց տուած իր խոստումը կրկնեց. մարդոց մօտ զրկեց Մեսիան՝ Փրկիչը, որպէսզի մարդկութիւնը ազատէ մեղքի ու մահուան իշխանութենէն: Աստուծոյ մարգարէները հռչակած էին անոր գալուստը: Այսպէս, Եսայի մարգարէն կ'ըսէ. «Տէրը ձեզի պիտի տայ զԱյն: Ահա կոյսը պիտի յղանայ ու որդի մը ծնի, եւ զայն էմմանուէլ պիտի կոչեն», որ կը նշանակէ՝ «Աստուած մեզի հետ է»: Երբ ան գայ, կ'ըսէ Եսային, անոր թագաւորութիւնն ալ կու գայ եւ ուրախութիւն ու խաղաղութիւն կը տիրէ Աստուծոյ ազգին ու սուրբ Երուսաղէմին մէջ:

«Արթնցի՛ր, լուսաւորու՛՛ Երուսաղէմ, որովհետեւ մօտեցած է քու լոյսը եւ Տիրոջ փառքը քու վրադ պիտի ծագի... այլեւս արեգակը չէ որ ցերեկ ատեն քեզի լոյս պիտի տայ, ոչ ալ լուսնի փայլքը պիտի լուսաւորէ քեզ, այլ Տէրը ինք պիտի ըլլայ քու յաւիտեանական լոյսը»: Բոլորը սկսան հաւատալ այս մարգարէութեան կատարումին եւ Փրկչին երկիր գալու լուրին, որ Սուրբ Կոյսէն պիտի ծնէր:

Աստուծոյ Որդիին մայրը

Աստուած այնքան սիրեց աշխարհը, որ իր միածին Որդին տուաւ, որպէսզի ով որ անոր հաւատայ՝ չկորսուի, այլ յաւիտեանական կեանք ունենայ: Աստուծոյ Որդին երկիր իջաւ մեր մեղքերը քաւելու համար, որպէսզի մենք միշտ Աստուծոյ հետ ըլլանք, Անոր թագաւորութեան մէջ: Ան մարդացաւ եւ ամեն կերպով մարդու պէս եղաւ, Սուրբ Կոյսէն ծնելով:

Աստուած իր Որդիին համար մայր ընտրեց Սուրբ Կոյս Մարիամը: Ինչո՞ւ համար զայն ընտրեց: Որովհետեւ ան սրբութեամբ կը հաւատար Աստուծոյ, Աբրահամի տոհմէն էր, Աբրահամի ու Յակոբի, Դաւիթ սաղմոսերգուի եւ անոնց սերունդներէն սերած էր: Անոնք այն մարդիկն էին, որոնք Աստուծոյ հետ յաւիտեանական ուխտ կնքած էին, երդում ըրած էին հաւատարիմ ըլլալ Անոր: Սուրբ Կոյս Մարիամ Երուսաղէմի մէջ մեծցած էր, Սողոմոն թագաւորի կառուցած տաճարէն ոչ շատ հեռու: Մարիամի ծնողները՝ Յովակիմն ու Աննան, իրենց երկար ատեն սպասած զաւակը Աստուծոյ ընծայեցին: Երբ երեք տարեկան էր, անոնք Մարիամը տաճար բերին եւ այնուհետեւ տաճարին մէջ դաստիարակուեցաւ ան: Հետագային ամիկա դարձաւ սրբութեան ու բարեպաշտութեան մարմնացում: 14 տարեկանին Մարիամ պէտք է հեռանար տաճարէն, որովհետեւ իր ծնողները մեռած էին արդէն, ան երթալիք տեղ չունէր: Քահանան Մարիամին հեռաւոր մէկ ազգականը գտաւ, որուն անունը Յովսէփ էր եւ աղջիկը անոր յանձնեց, որպէսզի ամիկա պահապան դառնայ կոյսին անբասիր սրբութեան:

Աւետումը

Սուրբ Կոյսը երբ Եսայի մարգարէութեան գիրքէն Փրկչին ծննդեան մասին կը կարդար, անոր երեւցաւ հրեշտակը ու ըսաւ. «Ուրախացի՛ր, ո՞վ շնորհալի կոյս, Տէրը քեզի հետ է»: Ան տեսնելով հրեշտակը, շփոթեցաւ անոր խօսքերէն: Հրեշտակը անոր ըսաւ. «Մի՛ վախճար, Մարիամ, քանի որ դուն Աստուծոյ առջեւ շնորհք գտար, ահա դուն պիտի յղանաս ու որդի մը ծնիս, ու անոր անունը Յիսուս պիտի դնես: Ան մեծ պիտի ըլլայ ու Բարձրեալին Որդին պիտի կոչուի եւ Տէր Աստուած անոր պիտի տայ իր հօր՝ Դաւիթի աթոռը եւ անոր թագաւորութիւնը վախճան պիտի չունենայ»: Մարիամ հարցուց հրեշտակին. «Իսկ ինչպէ՞ս կրնայ պատահիլ նման բան, երբ ես տակաւին տղայ մը չեմ ճանչնար»: Հրեշտակը պատասխանելով ըսաւ. «Սուրբ Հոգին պիտի գայ քու վրադ, եւ Բարձրեալին զօրութիւնը հովանի պիտի ըլլայ քեզի, այդ իսկ պատճառով ծնող երեխան Աստուծոյ Որդի պիտի կոչուի»: Այն ատեն Մարիամ ըսաւ. «Ահաասիկ ես Աստուծոյ աղախինն եմ, քու կամքդ թող ըլլայ» (Ղկ 1.35): Նոյն պահուն հրեշտակը անյայտացաւ:

Ճամբորդութիւն դէպի Բեթղեհէմ

Այդ օրերուն Օգոստոս կայսրին հրամանով իր իշխանութեան սահմաններուն մէջ մարդահամար կատարուեցաւ, որպէսզի կազմակերպուին տուրքերը հաւաքելու աշխատանքները: Եւ արձանագրուելու համար ամեն մարդ իր քաղաքը կ'երթար: Յովսէփն ու Սուրբ Կոյս Մարիամը Քալիլիայի Նազարէթ քաղաքէն Հրէաստան գացին, Դաւիթի քաղաքը՝ Բեթղեհէմ (որովհետեւ Յովսէփը Դաւիթի սերունդէն էր): Երբ անոնք հասան, արդէն մօտեցած էր Մարիամի ծննդաբերութեան ժամանակը, սակայն բոլոր պանդոկները լեցուն էին եւ իջեւանելու տեղ չկար: Յովսէփ ու Մարիամ քաղաքին մօտիկ քարայր մը գտան: Այնտեղ, անձրեւային եղանակին կենդանիներու հօտերը կը տեղաւորէին հովիւներ: Այդ քարայրին մէջ տեղաւորուեցաւ սուրբ ընտանիքը՝ գիշերելու համար: Եւ հոն իր որդին ծնաւ Սուրբ Կոյսը, խանձարուրեց զԱյն եւ դրաւ մսուրին մէջ:

Մեծ ուրախութիւնը

Այնտեղ հովիւներ կային, որոնք գիշեր ատեն իրենց հօտերուն կը հսկէին: Յանկարծ անոնց երեւցաւ Աստուծոյ հրեշտակը՝ Տիրոջ փառքը ծագեցաւ իրենց շուրջը ու հովիւները վախցան: Հրեշտակը անոնց ըսաւ. «Մի՛ վախճաք, ահա ձեզի ուրախ լուր մը պիտի տամ, որ ամբողջ մարդկութեան ուղղուած է: Այսօր Դաւիթի քաղաքին մէջ Փրկիչ մը ծնաւ ձեզի համար, որ օծեալ Տէր է: Ձայն պիտի գտնէք խանձարուրով փաթ-


թուած եւ մսուրի մը մէջ դրուած»: Եւ յանկարծ այդ հրեշտակին հետ երկնային զօրքերու բազմութիւն մը երեւցաւ, որ զԱստուած կ'օրհնէր ու կ'ըսէր. «Փառք Աստուծոյ բարձունքներուն մէջ, եւ երկրի վրայ խաղաղութիւն եւ մարդոց միջեւ հաճութիւն»: Եւ երբ հրեշտակները անոնց մօտէն երկինք բարձրացան, հովիւները իրարու ըսին. «Եկէք Բեթղեհէմ երթանք եւ տեսնենք թէ ի՞նչ է այն որ Տէրը մեզի ցոյց տուաւ»: Եւ անոնք շուտով գացին ու Մարիամն ու Յովսէփը գտան, ինչպէս նաեւ մսուրին մէջ դրուած Սանուկը: Բոլորը զարմանքով կը լսէին ինչ որ հովիւները կը պատմէին: Իսկ Մարիամ բոլոր ըսուածները իր սրտին ու մտքին մէջ կը պահէր: Հովիւները վերադարձան ու կը փառաւորէին

զԱստուած այն բոլորին համար, զոր լսեցին ու տեսան: Այն ատեն արեւելքի մէջ արտասովոր աստղ մը յայտնուեցաւ: Մոգերը տեսան այդ աստղը: Անոնց յայտնուեցաւ մեծ թագաւորի Ծննդեան լուրը: Անոնք սկսան աստղին ուղղութեամբ երթալ, բոլորին հարցնելով նորածին թագաւորին մասին: Աստղը զիրենք առաջնորդեց եւ բերաւ ու հասցուց Բեթղեհէմի այն քարայրին առջեւ, ուր կը քնանար Աստուածամանուկը: Երբ մոգեր մանուկը տեսան՝ շատ ուրախացան ու երկրպագեցին անոր: Անոնք նորածին մանուկին նուիրեցին արքայազնայել նուէրներ՝ ոսկի, կնդրուկ եւ զմուռս: Ապա, անոնք վերադարձան իրենց երկիրը՝ զարմացած եւ ուրախացած:

Սէր եւ ներում

Աստուած աշխարհի դրկեց իր Միածին Որդին՝ Յիսուս Զրիստոսը, որպէսզի դրախտէն վտարուած մարդը Աստուծոյ՝ մեր երկնաւոր Հօր մօտ վերադարձնէ:


Զրիստոս ցոյց տուաւ թէ Աստուած ինչքան կը սիրէ մեզ եւ ինչքան ներողամիտ է մեր նկատմամբ: Աստուած կ'ուզէ որ մենք Իրեն նման բարի ըլլանք եւ աշխարհի մէջ ապրող ու Իր ստեղծած բոլոր արարածները սիրենք: Խաւաքարտի մը վրայ փոխադրեցէք այս գծագրութիւնները եւ գրեցէք վրայի գրութիւնները: Առանձին-առանձին կտրեցէք զանոնք, որպէսզի կարդաք եւ սորվիք թէ ինչպէ՞ս պէտք է վարուիք մարդոց հետ, որպէսզի անոնք ալ կարենան մեզի ներել: Կարդացէք իւրաքանչիւր պատկերի վրայ գրուածը: Ձեր կարդացածները բաղդատեցէք Սուրբ Գիրքի համապատասխան բաժիններուն հետ (Եփ 4.31-32 եւ 5.1-2, Կր 13.4-6):



Աստուածապաշտութիւն սորվինք (Բ. Մաս)

ԵԿԵՂԵՑԻ

Եկեղեցի կը մտնենք, իբրեւ սրբատեղի: Հոն մենք կը տեսնենք մեր Տէր Յիսուս Քրիստոսի, Աստուածամօր, սուրբ ճգնաւորներուն ու այնտեղ գտնուող բոլոր աներեւոյթ էակներուն պատկերները: Տաճարը խունկի բոյրով պարուրուած կ'ըլլայ ու մոմեր վառած կ'ըլլան: Պաշտամունքի կամ եկեղեցական այլ ծիսակատարութեանց ընթացքին եկեղեցւոյ մէջ մենք կը տեսնենք եպիսկոպոսներ կամ քահանաներ եւ ուրիշ սպասաւորներ, եկեղեցական շքեղ զգեստներով:



Եկեղեցի բառը յունարէն է եւ կը նշանակէ՝ հաւաք, ժողով, կամ՝ հաւաքուելու, ժողովուելու վայր: Անիկա նաեւ Քրիստոսի խորհրդական մարմինն է, երկնային հարսը, ինչպէս նաեւ հաւատացեալներու բազմութիւնը: Հին Կտակարանին մէջ եկեղեցի բառը բազմաթիւ անգամներ գործածուած է՝ մատնանշելու համար Աստուծոյ երկրպագութիւն մատուցողները, հաւատացեալներու ամբողջութիւնը: Եկեղեցի կամ տաճար կը դառնայ նաեւ Յիսուս Քրիստոսի արիւնով մաքրուած եւ արդարացած մարդը: Պօղոս Առաքեալ կը գրէ. «Չէ՞ք գիտեր, որ Աստուծոյ տաճարն էք դուք, եւ Աստուծոյ հոգին կը բնակի ձեր մէջ» (Ա. Կր 3.16): Եկեղեցին մէկ է, ընդհանրական է, որովհետեւ անիկա ամբողջութիւնն է ուղղափառ հաւատացեալներուն, ո-

րոնք թէպէտ աշխարհի զանազան մասերուն մէջ կ'ապրին, սակայն ունին նոյն հաւատքը եւ միացած են մէկ եկեղեցւոյ կամարին տակ:

Մեր եկեղեցին, որ Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներէն մէկն է, կը կոչուի Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցի, կամ պարզապէս Հայ Եկեղեցի կամ Հայոց Եկեղեցի: Հայ ժողովուրդի ազգային եկեղեցին է անիկա. ունի Կաթողիկոսական զոյգ Աթոռներ՝ Ս. Էջմիածնի Կա-



թողիկոսութիւնը եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը: Երկու Աթոռներն ալ ունին իրենց գահակալ հայրապետները, իրենց Կաթողիկոսական իրաւասութիւններով եւ վարչական անկախ գործունէութեամբ: Հայ Եկեղեցին առաքելական կը կոչուի, որովհետեւ Յիսուս Քրիստոսի առաքեալները՝ Ս. Թադէոս եւ Ս. Բարթողիմէոս հիմնած են զայն, որոնք առաջին անգամ ըլլալով Հայաստանի մէջ քրիստոնէութիւնը քարոզած են ու հոն ալ նահատակուած: Անոնք «Հայաստանի առաջին լուսաւորիչները» կը կոչուին: Հայ Եկեղեցւոյ առաջին հայրապետը Ս. Գրիգոր Լուսաւորիչն է: 301 թուականին, Հայոց Տրդատ Գ. Թագաւորին օրով, քրիստոնէութիւնը պաշտօնապէս Հայաստանի թագաւորութեան պետական կրօնը հռչակուած է:


Ի՞նչ կրնանք փալ

Ի՞նչ կրնանք տալ քեզի, ո՛վ Աստուած, որպէսզի դուն մեր երկիրը այցելես, ու մեզի պէս մարդ դառնաս:
Քու ստեղծագործութիւններդ իրենց պտուղները կը բերեն քեզի՝

Երկինք-երկիր

Ս. Ծննդեան սրբապատկերը օրինակ իբրեւ օգտագործելով, այլ նկարներ գծեցէք,
որոնք այս սրբապատկերին մաս պէտք է կազմեն:

Հրեշտակները երգ կ'երգեն



**մոգերը-ոսկի
խումկ եւ զմուռս**

Անարատ մայր, մենք քեզի կու տանք...

ԸՆՏԱՆԵԿԱՆ միջավայրին մէջ

Այս անգամ մեր պարտականութեան վերնագիրը պիտի ըլլայ. «Մե՞նք ինչ կրնանք տալ»: Աստուծո՞ւ պէտք է սորվինք մենք ու նոյն ատեն սորվեցնենք ուրիշներուն՝ երախտապարտ ըլլալ Աստուծոյ այն բոլոր անգնահատելի, անգին պարգեւներուն համար, զոր տուած է մեզի Ան: Այդ պարգեւը իր Ռոդին էր՝ Յիսուս Քրիստոսը, մեր Փրկիչը: Ամբողջ երկինք ու երկիրը իրենց նուէրները կը մատուցեն Տիրոջ, իբրեւ երախտագիտութիւն մեզի շնորհուած մեծ պարգեւին համար: Իսկ Տիրոջ պարգեւը մարդկութեան տարբեր էր. Ան ինքզինք ընծայեց մարդոց...:

Իսկ մե՞նք ինչ կրնանք տալ Աստուծոյ

Ընդհանրապէս մեր հարազատներուն ուրախութիւն պատճառելու համար խանութ կ'երթանք եւ անոնց սիրած բաները կը գնենք: Սակայն այլ միջոց մըն ալ ունինք մենք մեր դիմաց. «Մեր անձը նուիրել ուրիշներուն», ինչպէս Աստուած ըրաւ այդ: Սիւսանիկ քանի մը օրինակներ, ուր ցոյց կը տրուի թէ մենք ալ կրնանք մեր անձերը ուրիշներուն նուիրել.

1. Մէկու մը սիրած բանաստեղծութիւնը կարդացէ անոր, կամ երգ մը երգեցէ իրեն համար:
2. Իր սիրած նկարը գծեցէ, բնութեան տեսարան մը, կամ իր սիրած կենդանին ու իրեն նուիրեցէ:
3. Ժամանակ յատկացուցէ ուրիշներուն, անոնց ծառա-

յեցէ, օրինակ՝ խանութ գացէ ու գնումներ ըրէ իրեն համար, անոր շունը դուրս տարէ պտոյտի, անոր ծաղիկները ցրեցէ, անոր տան պատուհանները լուացէ, մաքրեցէ անոր տան աստիճանները, կամ գիրք կարդացէ անոր որուն աչքերը լաւ չեն տասներ:

4. Օգնեցէ բոլորին, որ մտածեն այն նուէրներուն մասին, որոնք խանութներուն մէջ չեն ծախուիր ու մենք կրնանք զանոնք պատրաստել:

Կրնաք նաեւ այս պատմութիւնը պատմել. Բանտարկուած մարդու մը ստիպեցին որ իր վրայ կախած խաչը հանէ: Մարդը երբ չուզեց հանել՝ խստօրէն ծեծուեցաւ ու գիտակցութիւնը կորսնցուց: Երբ արթնցաւ՝ կրծքի խաչը հանած էին արդէն: Առանձինը նստաւ բանտին փոքր ու ցուրտ սենեակին մէջ՝ պատռտած հագուստներով: Քովի սենեակին մէջ գտնուողը գիտէր թէ ինչ կը պատահէր դրացի խուցին մէջ եւ գիտէր նաեւ որ այդ մարդուն համար ի՞նչ արժէք ունէր խաչը: Ու հակառակ անոր որ շատ ցուրտ էր, իր գուլպաները հանեց, քակեց անոնց թելերը ու անոնցմով խաչ հիւսեց ու ելեկտրականութեան ծակէն քովի սենեակը իրեց զայն ու տուաւ իր դրացի բանտարկեալին:

Ձեր տան մէջ մտածեցէ թէ ինչպիսի՞ զոհողութիւն էր բանտի ընկերոջ ըրածը: Կրցա՞ւ բաւարարել ան իր բանտի ընկերոջ ամենէն մեծ կարիքը: Դո՞ւք ինչ ըրած էք ձեր դրացիներուն: Բանով մը օգնա՞ծ էք անոնց:

Յիսուսի մկրտութիւնը

Քրիստոսի Ծնունդը կը տօնենք

Աստուածայայտնութեան երկրորդ օրուան շարական

Դառք անմարմնականք երկնաւոր զօրացն, ի մէջ հովուացն երգէին զծագումն լուսոյ մեծին ի հօրէ մեզ ի փրկութիւն:

Եւ մոգքն աստեղը նշանաւ եկին ի Բեթղեհէմ երկիրպագին տեառն, եւ ի յայրին մատուցին զընծայս խորհրդոյ:

Եւ հովիւքն երգեն ընդ հրեշտակս, փառք ի բարձունս մեծիդ Աստուծոյ. որ եկիր եւ փրկեցեր զսիեզերս իոյով յայտնութեամբդ:

Ութերորդ օր

Ծագումն հրաշալի որ անյայտ էր ի մէնջ. եւ բանն հայրական անըմբռնելի. հուր փայլակնացեալ եւ ի մարմնի բնակեցաւ անվնաս պահելով զարարածս ամենայն:

Ծագումն հրաշագործ որ ի կուսէն ծագեցաւ, նառաջայբելով զարարածս ամենայն. երկինք ցնծային եւ երկիրս ուրախանայր. եւ Քրիստոս Աստուած ընդ մարդկան շրջեցաւ:



*Մարութոյ հոգին իջաւ անոր վրայ եւ երկինքէն ձայն մը լսուեցաւ,
որ կ'ըսէր «Ան է իմ սիրելի Որդիս, որուն հաւանած եմ ես»*



Տիրոջ մկրտութիւնը

Հրեշտակը Յովհաննէս Մկրտիչին ծնունդը կ'աւետ

Քրիստոսի ծնունդէն քանի մը ամիս առաջ ուրիշ մանուկ մըն ալ ծնաւ Հրեաստանի մէջ: Իր ծնունդէն առաջ Գաբրիէլ հրեշտակապետը երեւցաւ անոր հօր՝ Զաքարիա քահանային ու ըսաւ, որ ինք զաւակ մը պիտի ունենայ, որ Տիրոջ կողմէ մեծ մէկը պիտի ըլլայ:

Զաքարիան չհաւատաց հրեշտակին խօսքերուն: Եւ Աստուած պատժեց զինք՝ համր դարձնելով զայն, մինչեւ իր ըսածը իրականանար: Երբ մանուկը ծնաւ, Զաքարիան տախտակ մը պահանջեց եւ անոր վրայ գրեց Յովհաննէս, այդ էր անոր անունը: Նոյն պահուն բացուեցան Զաքարիային լեզուին կապանքները եւ ան սկսաւ խօսիլ՝ զԱստուած փառաբանելով:

Նորածին մանուկին՝ Յովհաննէսի մօր անունը Եղիսաբէթ էր: Ան Սուրբ Կոյս Մարիամի զարմուհին էր:

Զաքարիայի մարգարէութիւնը

Եւ Զաքարիան Սուրբ Հոգիով լեցուած՝ մարգարէացաւ ու ըսաւ. «Եւ դուն, ով մանուկ, Բարձրեալին մարգարէն պիտի կոչուիս, որովհետեւ դուն Տիրոջ առջեւէն պիտի երթաս, ճամբայ պատրաստելու համար, անոր ժողովուրդին տալու փրկութեան գիտութիւնը՝ անոնց մեղքերուն թողութեան համար... ուղղելու մեր ոտքերը դէպի խաղաղութեան ճանապարհը»:

Աստուծոյ հետ կեանքը՝ անապատին մէջ

Տակաւին պատանի տարիքին, Յովհաննէս հեռացաւ Յորդանան գետի միւս ափը գտնուող անապատը եւ այնտեղ սկսաւ ապրիլ, քարերու եւ աւազներու մէջ: Ուղտի մորթէ պատրաստուած հագուստ կը հագնէր եւ մեղուններուն պատրաստած մեղրէն կ'ուտէր:

Յովհաննէս քարոզութեան կը սկսի

Յովհաննէս երբ 30 տարեկան եղաւ, Տէրը անոր պարտականութիւն տուաւ ամբողջ աշխարհին աւետել Փրկչին մօտալուտ գալուստը եւ յայտարարել թէ մարդիկ պէտք է ապաշխարութեամբ ու մկրտութեամբ զԱյն դիմաւորելու պատրաստուին: Ան դուրս գալով անապատէն, Յորդանանի կողմերը զնաց քարոզելու համար: Մեծ թիւով մարդիկ կու գային զինք լսելու համար: Եւ ան մարդոց կ'ըսէր. «Ապաշխարեցէք, որովհետեւ մօտեցած է երկինքի թագաւորութիւնը: Ինձմէ ետք պիտի գայ խոստացուած Փրկիչը: Ան բոլորս իր թագաւորութիւնը պիտի հրաւիրէ: Սակայն հոն պիտի մտնեն միայն մեղքերէ մաքրուած, բարի ու ողորմած մարդիկ. անոնք՝ որոնք կը սիրեն Տէրը: Խոստովանեցէք ձեր մեղքերը եւ մկրտուեցէք»:

Երբ մարդիկ զղջային ու խոստովանէին իրենց մեղքերը եւ խոստանային մաքուր եւ սուրբ կեանք մը ապրիլ,

Յովհաննէս կ'ըսէր անոնց. «Ապաշխարեցէք ու մկրտուեցէք ձեր մեղքերուն թողութեան համար»: Անոնք իրենց մեղքերը կը խոստովանէին եւ ջուրին մէջ մտնելով կը մկրտուէին: Յովհաննէս իր ձեռքը կը դնէր անոնց գլխուն, որպէսզի անոնց հոգիներն ու սրտերը մաքրուին: Եւ ինչպէս որ ջուրը կը մաքրէ մարմինը, նոյնպէս ալ ապաշխարութիւնը կը մաքրէ հոգիները: Շատեր այնպէս կը կարծէին, որ Յովհաննէս ինք է խոստացուած Փրկիչը կամ Եղիա մարգարէն՝ յարութիւն առած: Իսկ Յովհաննէս խոնարհաբար հետեւեալը կ'ըսէր. «Ես անապատին մէջ կանչողին ծայրն եմ: Ես ձեզ ջուրով կը մկրտեմ, բայց ինձմէ վերջ պիտի գայ ինձմէ աւելի զօրաւոր մէկը, որուն կօշիկներուն կապերը կապելու արժանի չեմ ես, Ան ձեզ Սուրբ Հոգիով պիտի մկրտէ»:

Այսպէս կը խօսէր Յովհաննէս Յիսուս Քրիստոսի մասին: Եւ իր մօտ եկող բոլոր չար ու մեղքամիտ մարդոց կ'ըսէր. «Ամէն ծառ, որ բարի պտուղ չի տար, պիտի կտրուի ու կրակը մետուի»:

Յիսուսի մկրտութիւնը

Երբ Յովհաննէս բազմաթիւ մարդիկ կը մկրտէր, տեսաւ որ Յիսուս Քրիստոս Ինք ալ Յորդանան եկած է: Եւ ըսաւ. «Ահաւասիկ Աստուծոյ զառնուկը, որ աշխարհի մեղքերը իր ուսերուն առած է»: Յիսուս մօտեցաւ, որպէսզի Յովհաննէսի կողմէ մկրտուի: Սակայն Յովհաննէս շուտով ետ քաշուեցաւ, ըսելով. «Ես քեզմէ պէտք է մկրտուիմ»: Եւ այդ ժամանակ Տէրը անոր պատասխանեց, որ պէտք չէ հակառակի Բարձրեալի կամքին: Յովհաննէս կատարեց Տիրոջ կամքը ու մկրտեց Յիսուսը: Փրկիչը կ'ուզէր, որ բոլորն ալ իրեն պէս՝ Բարձրեալին կամքը կատարեն:

Երկնային վկայութիւն

Մկրտուելէն ետք, Յիսուս շուտով դուրս ելաւ ջուրէն ու երկինքը բացուեցաւ: Յովհաննէս Սուրբ Հոգին տեսաւ, որ աղանձի կերպարանքով երկինքէն կ'իջնէր ու կը հանգչէր Փրկչին ուսին վրայ: Եւ երկինքէն ծայր մը լսուեցաւ. «Ահաւասիկ իմ սիրելի որդիս, որուն հաւանած եմ»: Եւ Յովհաննէս ներկայ մարդոց դիմաց վկայեց, ըսելով. «Ես տեսայ ու վկայեցի, որ այս է Աստուծոյ Որդին»:

Քրիստոսի առաջին աշակերտները

Յաջորդ օր, Յովհաննէս գետափին կեցած էր իր երկու աշակերտներուն հետ: Տեսնելով որ Յիսուս իրենց կը մօտենայ՝ ըսաւ. «Ահաւասիկ Աստուծոյ զառնուկը»: Այս խօսքերը իրմէ լսելով, աշակերտները հետեւեցան Յիսուսի: Այսպիսով, Տիրոջ մօտ եկան Իր առաջին երկու աշակերտները:

Որո՞նք կը պատկանին այս խօսքերը

Իւրաքանչիւր ամպիկին դիմաց գրեցէք անոր անունը, որ այդ խօսքը ըսած է,
կամ այդ գործը կատարած է: Անուններուն ցուցակը դրուած է էջին վարը:
Կարգ մը անունները քանի մը անգամ կարելի է գործածել:

Ես կրնամ ըսել, թէ ի՞նչ կը
մշամակենք քու տեսած երազներդ:

Յրեշտակները ամոնց ըսին.
«Փառք Աստուծոյ՝ բարձունքներուն մէջ»:

Ամ տեսաւ աչրող,
սակայն շնորհալոյս մորեմին:

Ամոնք ամպի սիւնին
հտեւէն կ'երթային:

Կոյսը Որդի մը պիտի ծնի եւ անոր
անունը էմմանուէլ պիտի ըլլայ:

Ամ կ'ըսէր՝ ապաշխարեցէք
ու մկրտուեցէք:

Ամոնք փարսաւորին ըսին.
«Ազատ ծնէ մեզ»:

Ամ Աստուծոյ հետ խօսեցաւ լերան
կատարին եւ անկէ ստացաւ օրհներ:

Ամոնք շատ ճամբայ կտրեցին
ու տեսան թագաւորը:

Ուրախացիր շնորհալի,
Տէրը քեզի հետ է:

Ամոնց զաւակը ճամշցաւ
Յիսուսը եւ զայն մկրտեց:

Ես Աստուծոյ
աղայիսինն եմ:

Աստուած, Սուրբ Կոյս Մարիամ, Յովհաննէս Մկրտիչ, մոգեր, հովիւներ, Մովսէս, Դանիէլ մարգարէ,
Եսայի մարգարէ, Գաբրիէլ հրեշտակապետ, Զաքարիա, Եղիսաբէթ, հրեաներ:

Աստուածապաշտութիւն սորվինք (Գ. Մաս)

ՍԵՂԱՆ

Աստուած դրախտէն մարդը վտարելէն յետոյ, զայն չլքեց: Բոլոր ժամանակաշրջաններուն ալ, եղան ընտրեալ մարդիկ, որոնք Աստուծոյ հետ միշտ սուրբ հաղորդակցութեան մէջ գտնուեցան եւ իրենց նուիրումը զոհաբերութեամբ արտայայտեցին: Սկսած Աբելէն՝ առաջին արդարէն, Աստուծոյ ընտրեալները սեղաններ շինեցին, որոնց վրայ զոհեր մա-

տուցանեցին Աստուծոյ: Այդ բոլոր սեղաններն ալ սուրբ էին, որովհետեւ Աստուծոյ նուիրուած էին եւ Ան ընդունած էր անոնց վրայ մատուցուած զոհերը: Մովսէս ինք ալ սեղաններ շինած էր Վկայութեան Խորանին համար, որ օրինակ դարձաւ Նոր Ուխտին, եւ անոր մէջ իրականացած բոլոր խորհուրդներուն: Ինչպէս որ եկեղեցւոյ Դայրերը կ'ըսեն, Զին Ուխ-

տի բոլոր սեղանները սուրբ էին եւ զոհերը՝ ընդունելի, միայն անոր համար որ անոնք կենդանի խորհրդանշներն էին սպասուող Մեսիային եւ Անոր նուիրական զոհաբերութեան:


Սեղանը

Սեղանը, սուրբ եւ սրբացնող քառակիւն շինութիւն մըն է՝ խորանին կեդրոնը, որուն վրայ Աստուած Գառնուկին՝ Յիսուս Զրիստոսի յաւիտեանական պատարագի խորհուրդը կը կատարուի: Աստուծոյ Գահն ալ սեղան կը կոչուի, որուն վրայ Սուրբ Երրորդութիւնը կը բազմի անտեսանելիօրէն: Սեղանը տափարակ մարմարով, քարէ սիւնի մը վրայ կեցած կ'ըլլայ, որուն բոլոր կողմերը օծուած կ'ըլլան: Ներկայիս, սեղանը տարբեր է հին ատեն շինուած սեղաններէն եւ հիմա միայն անոր առջեւը ու երկու կողմերը բաց են, իսկ ետեւը՝ խաչկալը դրուած կ'ըլլայ: Դայրական եկեղեցիները մայր սեղանէն բացի, կողմերն ալ ուրիշ խորաններ ունին, իսկ էջմիածնի տաճարին կեդրոնը կայ իջման սեղանը, որ Գրիգոր Լուսաւորչի տեսիլքին հիման վրայ Միածինի իջած վայրը կը խորհրդանշէ: Սեղանին վրայ մշտավառ կանթեղ ու Աւետարան կ'ըլլայ, որ մեզի կը յիշեցնէ Զրիստոսի պատուիրանները եւ վերջին դատաստանին օրը, երբ Աւետարանին հիման վրայ, Աստուծոյ հրամանով մեր բոլոր մտածումները ու գործերը պիտի դատուին: Դատաւարները զայն կը համբարեն եկեղեցի մտած ու անկէ դուրս ելած պահուն:



Յովհաննէս Մկրտիչին կամ Կարապետին տօները

Հայ Առաքելական Եկեղեցւոյ կողմէ ընդունուած սուրբերուն մէջ իր իւրայատուկ տեղը ունի Յովհաննէս Մկրտիչը կամ Կարապետը: Ս. Յովհաննէս Մկրտիչը հայոց քրիստոնէական օրացոյցին մէջ բազմաթիւ տօներ ունեցած է եւ տօներու թիւով միայն Ս. Գրիգոր Լուսաւորիչը կարելի է իր հետ համեմատել, որ ըստ աւանդութեան այդ տօներէն երկուքին հիմնադիրն է: Հինգերորդ դարու առաջին կէսին ապրած «Բիւզանդարան» պատմութեան հեղինակը կ'ըսէ, թէ Ս. Յովհաննէսի տօնը հաստատած են Գրիգոր Լուսաւորիչն ու Տրդատ արքան. հետեւաբար, անոր տօնը 4-րդ դարէն սկսած են տօնել:



հին վկայութիւնները (ուրիշ սուրբերուն հետ յիշուածներն անկախաբար), իրարմէ չեն բաժներ անոր Շնորհեան, Գլխատման, Նշխարներու եւ Գլուխի գտնուելուն տօները, այլ պարզապէս կ'ըսեն՝ «Յովհաննու Մկրտչի», «Յիշատակի մեծի Յովհաննու», «Ձիշատակ սրբոցն», եւայլն: Ծիշդ է որ այս տօները յստակ բաժանումներ չունէին, սակայն զգալի է, որ սկսած էին կազմաւորուիլ Յովհաննէս Մկրտչի տօները:

18-րդ դարուն, Սիմէոն Երեւանցի հայրապետը, մեծ Սուրբին նուիրուած տօները յստակացուց եւ դասաւորեց հետեւեալ կերպով. Զրիստոսի Շնորհեան եւ Յայտնութեան ութ օրերէն յետոյ (Յունուար 14, եւայլն) կը տօնենք Յովհաննէս Մկրտչի ծննդեան տօնը, իսկ Հոգեգալուստէն ետք եկող 12-րդ օրը (շարժական), դարձեալ տօն է Յովհաննու Կարապետի եւ Աթանազիէի: Վերջապէս, Ս. Աստուածածնի Վերափոխման տօնէն ետք եկող երրորդ Կիրակիին Հինգշաբթի օրը (շարժական), կը տօնենք Յովհաննու Կարապետին եւ Յոթ Արդարին տօնը:

Հայ Առաքելական Եկեղեցին այս շարքով կը տօնէ Ս. Յովհաննու Մկրտչին կամ Կարապետին տօները: Յովհաննէս Մկրտիչը միջնադարու քրիստոնէական մշակոյթի բոլոր բնագաւառներէն ներս իւրայատուկ տեղ ունեցած է: Հայ ինքնուրոյն թէ թարգմանական գրականու-

թեան մէջ Սուրբ Յովհաննէսի նուիրուած բազմաթիւ ճառեր, ներբողներ, քարոզներ ու շարականներ գրուած են, ուր կը գովաբանուին անոր արժանիքները: Հայաստանէն սկսեալ զանազան երկիրներու մէջ (Մուշ, Բաղէշ, Լիբանան, Միացեալ Նահանգներ եւ այլ երկիրներ, Երուսաղեմ եւ այլուր) Յովհաննէս Մկրտչի անունով բազմաթիւ վանքեր ու եկեղեցիներ շինուած են:

Ահաւասիկ քանի մը օրինակներ Սուրբ Յովհաննու Մկրտչին նուիրուած տօներու շարականներէն.

Ճարաթ օր

Յիշատակ Յովհաննու Մկրտչի Գլխատման

Կարապետ արքայութեանն երկնից սուրբ Յովհաննէս Մկրտիչ, որ եղեւ աշխարհի քարոզող փրկութեան յաւիտենից. աղօթիւք սորա տէր լուր մեզ եւ ողորմեա:

Որ առաւել քան զմարգարէս մեծ ի ծնունդս կանանց. որ զքեզ մեզ յայտնեաց աստուած եւ մարդ յերկրի երեւեալ. աղօթիւք սորա տէր լուր մեզ եւ ողորմեա:

Կանոն

Յովհաննու Մկրտչի Շնորհեան

Արեգականն արդարութեան ծագման արուսեակդ առաւօտեալ, նախընթաց ճանապարհի որդւոյն Աստուծոյ տնօրէնութեան սուրբ Յովհաննէս. առ Զրիստոս բարեխօսեա վասն անձանց մերոց:

Բարձրելոյն անճառ խորոց տեսանող իմաստիւք հոգւոյն. ի յորովայնէ մաքրեալ տաճար Աստուծոյ եւ բնակարան սուրբ երրորդութեանն. առ Զրիստոս բարեխօսեա վասն անձանց մերոց:

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԶՕՐԱՎԱՐ

Սուրբ Սարգիսը, կամ Սուրբ Սարգիս Զօրավարը քրիստոնէական հաւատքին համար նահատակուած մարտիրոս մըն է, որ հայ սուրբերուն շարքին դասուած է: Անկա ծանօթ է «արագահաս», «բարեխօս», «շնորհատու» յատկանիշներով: Ներսէս Շնորհալին իր «Գիր հաւատոյ խոստովանութեան» գիրքին մէջ կը գրէ, որ Սուրբ Սարգիսը «բարեպաշտ» իշխան մըն էր, Մեծն Կոստանդիանոսի ու անոր զաւկին իշխանութեան օրով: Յայսմա-



տւրքներուն համաձայն, Սարգիս ազգութեամբ «Ռոռոմ» (յոյն) էր եւ Կոստանդիանոս կայսրին կողմէ «իշխան եւ ստարտեւլատ» նշանակուած էր Կապադովկիոյ վրայ, որուն մայրաքաղաքը Կեսարիան էր: Սարգիս ծանօթ եղած էր իբրեւ քաջ ու պատերազմիկ անձ, թշնամիներուն դէմ մղուած բոլոր ճակատամարտներէն յաղթական դուրս գալուն համար: Ան եղած է նաեւ գթասիրտ քրիստոնեայ մը, որ իր ամբողջ հարստութիւնը աղքատներուն կը բաժնէր: «Յուլիանոս Ուրացող»ի թագաւորութեան օրով, Աստուած իրեն թելադրած էր իր որդիին՝ Մարտիրոսի հետ Դայաստան ապաստանիլ: Սակայն հայեր վախճալով Յուլիանոս արքայէն, սուրբին կ'առաջարկեն Պարսկաստան երթալ եւ Շապուհ թագաւորին (310-379) մօտ զինուորական ծառայութեան մտնել: Դոն ալ բազմաթիւ քաջագործութիւններով կը փայլի, որուն պատճառաւ՝ մոգերու եւ մոլեռանդ ամբոխին կողմէ կը մեղադրուի պարսկական բանակին մէջ քրիստոնէութիւնը տարածելու յանցանքով: Իր գաւակին՝ Մարտիրոսի հետ կը նեղեն զինք, նախ գաւակը ամբոխին կողմէ ծեծի տակ կը սպաննուի: Ապա, թագաւորին հրամանով Սարգիսը կը բանտարկեն: Իբրեւ կուռքերն ու կրակը անարգող մը, անոր կը պարտադրեն ուրանալ Յիսուսը եւ ընդունիլ զրադաշտական կրօնը: Երբ անիկա անխախտ կը մնայ իր հաւատքին վրայ, գլխատումի հրաման կը տրուի: Նահատակութեան վայրին մէջ (Դադման կոչուած քաղաքին մօտերը), գլխատումէն առաջ, Սուրբը կ'աղօթէ Աստուծոյ, որպէսզի իր անունով աղօթող բոլոր մարդոց փափաքներն ու երազները իրականանան: Իր հետը կը նահատակուին նաեւ իրեն հաւատարիմ 14 զինուորները, որոնք քրիստոնեայ դարձած էին:

Հաւատացեալները գաղտնի կերպով կը վերցնեն Սուրբ Սարգիսի եւ միւս նահատակներուն մարմինները եւ Համիան կոչուած քաղաքին մէջ կ'ամփոփեն, ուրկէ՝ ըստ Յայսմաւորքներուն տուած տեղեկութիւններուն, Մեսրոպ Մաշտոց կ'առնէ Սուրբ Սարգիսի մարմինը, կը բերէ Դայաստան, կ'ամփոփէ Ուշիի մէջ ու վանք մը կը շինէ այնտեղ:

Ս. Ներսէս Շնորհալի Դայրապետը շարական մը նուիրած է Ս. Սարգիսին ու անոր նահատակութեան:

Ամենասուրբ Երրորդութեանն ընտրեալ ծառայ եւ հաւատարիմ. յաղթող սպառազէն եւ քաջ նահատակ. երազահաս սուրբդ Սարգիս շնորհաց օթեւան. բարեխօս լեր առ Քրիստոս վասն անձանց մերոց:

Թագաւորին երկնաւորի սուրբ զօրապետ եւ մենամարտիկ. սիրով անմահին խաչեալ յաշխարհի. երազահաս սուրբդ Սարգիս խաչիւ պսակեալ. բարեխօս լեր առ Քրիստոս վասն անձանց մերոց:

Արեգականն արդարութեան մեծ կարապետ պայծառ արուսեակ, ցոլացեալ յարեւմտից ի յելս արեւու. երազահաս սուրբդ Սարգիս անշէջ ճառագայթ. բարեխօս լեր առ Քրիստոս վասն անձանց մերոց:

Հայկական սովորութիւն է, որ Սուրբ Սարգիսին նուիրուած պահքի վերջին շաբաթ օրուան զիշերը, ափսէնեւրու մէջ ալիւր լեցնելով տանիքը կը դնեն, որուն վրայ Սուրբին ձիուն պայտը կը դրոշմուի, իբրեւ բարիքի ու երջանկութեան նշան:

Հայ մանրանկարչութեան մէջ Սուրբ Սարգիսը զօնուած է մօյոյցի մը վրայ զինուած վիճակով, երբեմն ալ վիշապա-զլուխ օձ մը միզակով սպաննած պահուն:

ԸՆՏԱՆԵԿԱՆ միջավայրին մէջ

Այս դասին մէջ մենք շատ կարեւոր դէպքի մը՝ Յովհաննէս Մկրտիչին կողմէ Տէր Աստուծոյն՝ Յիսուս Քրիստոսի Մկրտութեան մասին լսեցինք: Ինչո՞ւ համար Աստուած Յովհաննէսը ընտրեց փաստելու համար թէ Յիսուս Աստուծոյ որդին է, թէ՛ Ան մեծագոյն լոյսն է, որ իւրաքանչիւր մարդու լոյս կու տայ: Յովհաննէս պետք է «ճամբայ պատրաստէր Աստուծոյ համար»: Ան երկար տարիներ մնաց Յորդանանի անապատին մէջ եւ ճգնողական կեանք ապրելով՝ Աստուծոյ կամքը կատարեց: Յովհաննէս մարդոց կը քարոզէր Աստուծոյ մօտալուտ գալուստին, ապաշխարութեան եւ հոգեպէս վերանորոգուելու մասին: Սակայն ինք՝ իր անձը արժանի չի նկատեր նոյնիսկ Յիսուսի կօշիկներու կապերը քակելու: Ջարմացուցիչ է նման մարգարէի մը, հերոսի մը այսքան խոնարհութիւնը: Երեւակայեցէք պահ մը, որ Յովհաննէս Մկրտիչը կեցած է ու մարդիկ իր խօսքը կ'ուզեն լսել: Մտածեցէք թէ ի՞նչ պիտի զգայիք եթէ դուք իր տեղը ըլլայիք: Այսօր շատ երգիչներ կամ

համբաւաւոր անձեր իրենց բազմահազար երկրպագուները ունին, որոնք անոնց բերնէն կը կախուին ու կը լսեն զիրենք: Նման նշանաւոր մարդոց երբ ըսէք՝ «Ո՞վ էք դուք», անոնք կը պատասխանեն. «Ես մեծ երաժիշտ եմ եւ սքանչելի երաժշտութիւն կը գրեմ ու բոլորն ալ կ'ուզեն լսել իմ գրածներս»: Սակայն Յովհաննէս ամբողջովին տարբեր պատասխան կու տար: Ան կ'ըսէր թէ Աստուծոյ ճամբան կը պատրաստէ ինք:

Հայ Առաքելական Եկեղեցին, Քրիստոնեայ Եկեղեցւոյ հին աւանդութեան համաձայն, Սուրբ Ծնունդը եւ Աստուայայտնութիւնը (Յիսուս Քրիստոսի Մկրտութիւնը) Յունուար 6-ին կը տօնէ: Պատարագի աւարտին տեղի կ'ունենայ Ջրօրհնէքի արարողութիւն եւ օրհնուած ջուրը հաւատացեալներուն կը բաշխուի:

Այդ օրուրդն սկսեալ, քահանաները իրենց ժխականներուն այցելելով տնօրհնէք կը կատարեն եւ անոնց սեղանները կ'օրհնեն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. Աստուած աշխարհը ստեղծեց _____	3
2. Աստուած մարդը կը ստեղծէ _____	9
3. Ադամն ու Եւան Աստուծոյ պատուիրանը կ'անտեսեն _____	15
4. Աշխարհի Ջրեղեղը եւ Նոյին փրկութիւնը _____	21
5. Աստուած ուխտ կը կնքէ Աբրահամի հետ _____	27
6. Աստուած իր խոստումը կը կատարէ _____	33
7. Իսահակին համար հարսնցու մը _____	39
8. Չարութիւն _____	45
9. Յակոբի երազը _____	51
10. Երկու եղբայրները կը հաշտուին _____	57
11. Տէրը կը պահպանէ Յովսէփը _____	63
12. Յովսէփը իր եղբայրները կը փրկէ _____	69
13. Աստուած Մովսէսը կը կանչէ _____	75
14. Աստուած իր ժողովուրդը դուրս կը բերէ Եգիպտոսէն _____	81
15. Անապատին մէջ՝ Աստուծոյ առաջնորդութեամբ _____	87
16. Աստուծոյ պատուիրանները եւ անոնց գործադրութիւնը _____	93
17. Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ _____	99
18. Տիրոջ մկրտութիւնը _____	105

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՆՕԹ

«Աստուծոյ Հետ Ապրինք» դասագիրքը Gospel Light կազմակերպութեան կողմէ պատրաստուած եւ World Vision կազմակերպութեան կողմէ հրատարակուած է: Անոր հայերէն տարբերակը պատրաստուած ու հրատարակուած է Երեւանի Պետական Համալսարանի Աստուածաբանական Բաժանմունքին կողմէ: Ի տարբերութիւն անգլերէնին, այնտեղ ներմուծուած են Հայ Առաքելական Եկեղեցւոյ սուրբերու վարքն ու կարգ մը նշանաւոր տօներն ու աւանդութիւնները:

Սոյն արեւմտահայերէն հրատարակութեան մէջ կարելոր դերակատարութիւն ունեցած է Լիբանանի Հայոց Առաջնորդ Գերշ. Տ. Գեղամ Ս. Եպս. Խաչերեանը, իսկ թարգմանութիւնն ու վերախմբագրումը կատարուած է Գերպ. Տ. Գրիգոր Ծ. Վրդ. Չիֆթեանի կողմէ: Թարգմանութեան համար երկու տարբերակներն ալ (անգլերէն եւ հայերէն) օգտագործուած են: Հայ Եկեղեցւոյ տօներու եւ սուրբերու պարագային հիմ բռնուած է հայաստանեան հրատարակութիւնը, մանր սրբագրութիւններով:

